


ԴՐՈՇԱԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ԿՈՒԵՆՔ, ԿՈՏՈՐՈՒՄ ԵՆ

Դարձեալ կոտորած, դարձեալ ջարդ:

Սուլթանի կառավարութիւնը այժմ էլ Տրապիզոնն ու շրջակայքն է աւերակ դարձրել. հայ բնակիչները կոտորել, սրի անցկացրել: Տեղի ունեցած սարսափները, կոտորածն ու աւերումը աւելի գոսկալի են եղել, քան ենթադրուել էին. հայերը իրենց դահիճների կատարեալ տրամադրութեան տակ են եղել և դահիճը կոտորել մորթոտել է, այրել-աւերակ է դարձրել:

Մարդկային լեզուն ոչ մի ոյժ չունի ներկայացնելու տեղի ունեցած սարսափները. հարկաւոր է աւելի քան հարեմական կեանքով, ներքինների ու ուլամների հոգով սնւած արեւելցու վառ երեւակայութիւնը, որ պատկերացնի այն վայրենի գազանային սարսափը, այն տէրրորը, որին ենթարկւած են եղել Տրապիզոնի և շրջակայքի հայերը, տէրրոր, որ ունեցել է իւր ամենազատ ասպարէզը՝ սանձարձակ գործելու, որքան պահանջում էր ներքինիների ու ուլամների սան սուլթանի լեշակեր, արիւնախում կառավարութիւնը, վրէժխնդիր լինելու, պատժելու ապստամբ հայերին, որ սպառնում են իրեն ոչնչացնելու: Եւ նա կատարեալ յաջողութիւն ունեցաւ Տրապիզոնի կոտորածում, նա այդ տեղ իւր նպատակին գրեթէ հասաւ. — չկայ մի հայի տուն, որ արիւնոտւած չլինի, չկայ մի հայ ընտանիք, որ իւր անդամներից կորցրած չլինի, չկայ քաղաքում ու շրջակայ հայաբնակ գիւղերում մի կէտ, որ հայի արիւնով արիւնոտւած չլինի... արիւն, ամեն տեղ արիւն... Սարսափ է, որ տարածում է սուլթանի կառավարութիւնը՝ կոտորած անելով — հայ ազգաբնակչութեանը տէրրորի ենթարկելով. — կոտորած ներքին նահանգներում, կոտորած Փոքր-Ասիայում, կոտորած Պոլսի շրջակայքում. սուր է, որ շողջողում է, գլուխ է, որ ընկնում է, գընդակ է, որ հարւածում է, մարդ է, որ գետինն է փր-

ւում: Սա մի աներեւակայելի մարդկային սպանդանոց է, սա մի աներեւակայելի տէրրոր է, որ, իբրև մի համաճարակ, ամբողջ երկիրն է բռնել: Սուլթանի կառավարութեան սուրը աւելի քան իւր դերումն է և նա անխնայ, աջ ու ձախ կոտորում, մորթոտում, ջարդ է տալիս հային, մոլեռանդ, կոյր, սխալալուծեամբ ու ատելութեամբ սնեցրած ու նախապատրաստած տաճիկ ամբոխի միջոցով, նրա թիկունքին նստած: Սուրը գլխաւորապէս ամբոխի ձեռքին, բայց նրա ձեռքում սուր դնողը ինքը կառավարութիւնն է, խփողը ամբոխն է, բայց օրինակ տուողը ինքը կառավարութիւնն է. իսկ Տրապիզոնի ջարդում, նա՞ կառավարութիւնը ափ-աշկարա հրապարակի վրայ էր և, իբրև զօրապետ, ղեկավարում էր ջարդը. ամեն բան կառավարութիւնն է, իսկական դահիճը, ոճրագործը, մարդասպանը նա է, սուլթանի պոռնիկ կառավարութիւնը:

Տեղի ունեցող ամենօրեայ կոտորածը, սարսափները հաստատում են սուլթանի կառավարութիւնը անշեղ կերպով ու հաստատուն քայլերով դիմում է իւր նպատակակէտին — ոչնչացնելու իրեն վտանգ սպառնացող տարրը, հայ ժողովուրդը:

Այս վաղուց յայտնի էր և մենք նախազգուշացրել ենք հայ ժողովուրդին կոտորածի վտանգից, հրաւեր կարդալով՝ չխնայել ոչ մի միջոց զինելու տաճկահայ եղբայրներին, թէ ինքնապաշտպանութեան և թէ կուսելու իւր ազատութեան համար:

Եւ այսօր տեղի ունեցող սարսափների իսկական հեղինակը ու իրաւաբանական պատասխանատուն թէև սուլթանի կառավարութիւնն է, բայց բարոյականը ինքը՝ հայ ժողովուրդն է: Եթէ այսօր տէրրորի ենթարկւած տաճկահայ ժողովուրդը զէնք չունի թշնամու դէմ պաշտպանելու, եթէ նրան ջարդում, մորթում են, բարոյական պատասխանատուն ինքը՝ հայ ժողովուրդն է և հոսող արեան կաթիլներից մի քանիսը կարող են նրա ձակատին ընկնել...

Զէնք, զէնք են բղաւել, սպառնացող կոտորածի վտանգը ու արհաւիրքը իւր ժամանակին ներկայացրել

ու օգնութիւն են կանչել, բայց Տաճկահայաստանից դուրս հայ ժողովուրդը աչքերը յառել էր դեպլոմատիային, ամեն բան նրանից էր յուսում, նրա պաշտպանութեան էր դիմում: Ահա և նրա պաշտպանութիւնը—կոտորած Երզնկայ, կոտորած Պոլիս, կոտորած Տրսպիզոն և շըջակայքը, կոտորած ԱգՏիսար, կոտորած, ինչպէս հարորդում են հեռագիրները՝ Մուշ, Կարին, Հայէպ և նորից Երզնկայ—վտանգ է սպառնում Վանին և բոլոր այն տեղերին, ուր հայ կայ. և թող այդ դեպլոմատիան պաշտպանի, ինչո՞ւ նա չի պաշտպանում, ինչո՞ւ է թողել անգէն ժողովուրդը գազանի ձիրաններում, որ յօշոտում, պատառ պատառ է անում... Ո՞ւր է, ո՞ւր այսօր այդ դեպլոմատիան, ո՞ւր են մարդասէրներն ու հայասէրները:

Չկայ՝ ո՛չ գը, հայ ժողովուրդը մենակ է, բոլորովին մենակ, անգէն, անպաշտպան: Այո՛, հայ թշուառ ժողովուրդը մենակ է ու անգէն, և ո՞վ է մեղաւորը. ինքը՝ Տաճկահայաստանից դուրս ապրող հայ ժողովուրդը, որ անտարբեր գտնւեց յեղափոխականների հրաւերին ու իւր խաղաղ ուղեղով յարեց դեպլոմատիային, որը... այո՛, մարդասէր է և այն աստիճանին, որ Տաճկահայաստանը, մարտիրոս ժողովուրդի հայրենիքը, այսօր մի արիւնտո դաշտ է ներկայացնում, որի վրայ ազատ ու անպատիժ, սանձարձակ թռիչքներ ու արշաւանքներ է անում հրէշը, անսովթ, գարշելի հեղինակը կոտորածի, հայ ժողովուրդի կտի ու տմարդ թշնամին—սուլթանի պոռնիկ կառավարութիւնը:

Հայ ժողովուրդը, բաւական է վերջապէս, ո՞ր օրուայ համար ես ապրում և ինչո՞ւ, շարժելի, օգնութիւն, ձե՛ռք տուր անպաշտպան եղբորդ, զէ՛նք տուր, միջոց տուր պաշտպանելու, կուեղու:

Տմարդ թշնամին պիտի՛ պատժւի, պէ՛տք է վրէժխընդիր լինել կոտորածների, սարսափների իսկական հեղինակից ու նրա հերոսներից: Եւ մի՛թէ կարող է պատահել, որ հայի ընկած, յօշոտած դիակով գւարձացողը, նրա ընտանիքը բռնաբարողը ու անպատուողը, նրա տունը և ինչքը աւերողը, նրա արեան մէջ լողացողը անպատիժ մնայ՝ ո՛չ, նա պիտի պատժւի, պիտի՛ վրէժխընդիր լինել. իւրաքանչիւրը իւր ուժի, իւր կարողութեան համեմատ պիտի օգնի, պիտի գործի, այլևս յապաղելու չէ, տատանման ըոպէն վաղո՞ւց պիտի անցած համարել:

Եւ դաւաճան, ոճրագործ է նա՛, որ ձեռները ծալած հանդիսատեսի դերը կը կատարի, իւր եղբոր արեան կաթիլները իբրև բիծ նրա ձակատին, որը անտարբեր կը լինի, եղբայրասպան է նա՛, որ օգնութեան չի հասնիլ: Կո՛ր է, մորթում են, կուե՛նք:

Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն Ի Զ Ա Ր Դ Ը

I

ՔԱՀՐԻ ՓԱՇՍՅԻ ԶԱՐԿՈՒՄԸ. ՍՈՍԿԱԼԻ ԿՈՏՈՐԱԾ
ՏՐԱՊԻԶՈՆՈՒՄ. ԱՅՐՈՒՄՆ ՇՐՋԱԿԱՅ ՀԱՅԱՐԱՆԱԿ
ԳԻՒՂԵՐՈՒ

Շտապում եմ գրել առ այժմ երկտողս, գրելիք շատ կայ, բայց դրութիւնս չի ներիր. մանրամասնութիւնք յառաջիկային —

Սեպտ. 20-ին (հ. տ.) Հայ Յեղ. Գաշնակցութեան երկու ահաբեկիչներ քաղաքիս արքունական Մեծ ճամբու վրայ, ժամը 11-ին երեկոյեան, ռեվոլվէրի հարւածներով վիրաւորեցին Վանի նախորդ կուսակալ, արիւնարբու գազան Բահրի փաշան և քաղաքիս զինուորական հրամանատար Ֆէրիզ փաշան. երկուսն ալ ոտքէն: Անմիջապէս հալածեցին ահաբեկիչները, որք սակայն նոյն վայրկեանին աներևութացան և մինչև այսօր՝ հակառակ խիստ խուզարկութեանց, շնորհիւ վեհ. սուլթանին, երևելի չեղան:

Սարսափը շատ ազդու եղաւ թուրք կառավարութեան և խուժանին վրայ:

Երկու օր վերջ, Սեպտ. 22-ին, ուրբաթ գիշեր, ժամը 2-ին, ամբողջ թուրք խուժանը ոտքի ելաւ հայերը կոտորելու: Սակայն առաջին յարձակումին մէկ մարդ վիրաւորւելով, չհամարձակեցան գործի ձեռնարկել. բայց և այնպէս մինչև ժամը 6-ը հազարաւոր թուրքերու վայրենի գոռուն-գոչիւնները և ռեվոլվէրի ու մարթիններու պայթիւնները տեւեցին, ահ ու դողի մէջ ձգելով ամբողջ քրիստոնեայ ազգաբնակութիւնը: Այն գիշեր ու է պահապան զինուոր չեբրեցաւ յարձակման վայրերը. այնպէս որ հայ ժողովուրդը վախնալով, որ կառավարութիւնն ալ մասնակից է եղած յարձակման, հետեւեալ օրը բոլոր խանութները գոցեցին և սկսան քիչ շատ պաշտպանել՝ հաւանական կոտորածի մը դիմագրաւելու համար: Նոյն օրը առաջնորդարանէն դիմելով կուսակալ Գատրի պէյին՝ ապահովութիւն պահանջեցին, այդ խոզագլուխ գազանը ամեն կերպ ապահովութիւն խոստացաւ, որ երբէք հայոց դէմ ու է անախորժ բան տեղի չպիտի ունենայ և վերջացուց խօսքը ըսելով՝ «Ձեզ վնասելու համար իմ մարմնիս վրայէն պէտք է անցնին»:

Ասկէ աւելի հանդիսաւոր խոստում և պաշտօնական

ապահովութիւն չէր ըլլար: Հիւպատոսական մարմինն ալ միևնոյն հանդիսաւոր խոստումը լսեց և սկսաւ ապահովութիւն ներշնչել իրեն դիմող սարսափահար հայերուն. իսկ ուսական հիւպատոսն կը վճռուէր իրեն դիմող հայերն, ըսելով թէ՛ «Ի՞նչ եղաւ, որ ինձի կուգար. ձեր ըրած չարութիւնները ի՞նչ են, Պոլսոյ մէջ ըրածնիւ մոռցա՞ր. հայոց համար Քովսէր նշանակեցաւ Շաքիր փաշան, ինչո՞ւ անով գո՛հ չէք ըլլար»:

Որչափ որ առաջնորդարանէն և հիւպատոսներէն «բան չկայ, բան չկայ» կը յայտարարէր հայ ժողովրդին, սակայն իրողութիւնը հակառակը ցոյց կուտար:

Շուկայի Պիթ-Պազար կողմէ մասին մէջ, թուրք սրիկաները երկու երեք օր շարունակ հրահէն կը գնէին, իսկ շուկային երկու բերանները կեցած փօխներ կարգելէին հայերուն զէնք գնել և անցնողներն ալ կը խուզարկէին և գտած զէնքերնին կառնէին: Միւս կողմէն շրջակայ թուրք գիւղացիներ խումբ խումբ քաղաք կը դիմէին: Ժողովուրդը միշտ առաջնորդարան կը վազէր՝ թուրքերու սպառնական շարժումները իմացնելու. փոխանորդը և քաղաքային ժողովոյ անդամներէն կուսակալին կը դիմէին և մատնանիշ կընէին իրողութիւնները: Կուսակալը իւր սովորական կերծաւորութեամբ կը հանդատացնէր զանոնք և յետ կը ձամբէր: Կիրակի օրն ալ ա՛հ ու դողի մէջ անցաւ Հայ, յոյն և թուրք, ամենն ալ գոցած էին կրպակներն:

Երկուշաբթի առաւօտ մեռաւ ուրբաթ օրը յարձակման միջոցին վիրաւորուած Սապրի անուն թուրքը: Թուրք խուժանին գրգռուած սաստկացաւ և նոյն օրը անխնայ ծեծելով հայ կաթողիկ զինավաճառ Յովսէփը, բանտարկեցին: Կառավարութեան կողմէ յոյներուն գաղտնի պատուէր տրեցաւ՝ հայ չպահել տուններնին: Նոյն օր, երեկոյեան կողմ կուսակալ Քատրին կանչելով փոխանորդն ու հայ առաջաւորներ, իր կեղծաւորի դիրքը մէկէն ի մէկ փոխեց և պահանջեց երկու ահաբեկիչ հերոսները, եթէ ոչ ըսաւ՝ «ապահովութեան երաշխաւորութիւն չեմ տար»: Մերոնք խելքերնին կորուսած, եկան առաջնորդարան և յետ երկար խորհրդակցութեան, որոշեցին պատասխանել կուսակալին՝ թէ «իրենք թէև պարտաւոր չեն յանցաւորները գանելու, բայց եթէ գիտնան տեղերնին, կառավարութեան կը տեղեկացնեն: Կայսր կառավարութիւնը ինք կարող է իւր միջոցներով այդ յանցաւորները ձեռք անցունել և պատժել. իսկ եթէ կառավարութիւնը, հակառակ հայ ժողովուրդեան տածած յոյսին և վստահութեան, անկարող է կամ չուզեր պաշտպանել հայ հաւատարիմ հպատակները, հայ ժողովուրդը ինքզինքը կը յանձնէ նախախնամութեան կողմէ գտնուած ճակատագրին»:

Այդ մտօք ծանուցագրեր ալ առաջնորդարանէն նոյն օր ղրկեցան բոլոր հիւպատոսներուն, խնդրելով անոնց ալ պաշտպանութիւնը:

Բայց կուսակալին այդ սպառնալիքը չտարածեցաւ ժողովուրդեան մէջ և խելահասներն ալ կարծեցին, թէ կառավարական խաղ մըն է՝ ահաբեկիչները կերպով մը դանալու համար:

Խեղճերը չէին գիտեր՝ թէ շաբաթէ մի վեր ի՞նչ սոսկալի խաղ մը կը պատրաստէր հայոց գլխուն:

Կուսակալ, Ալայ պէյ և Քովսէր երբ մէկ կողմէն շաբաթէ ի վեր հայերուն ապահովութիւն կը յայտարարէին, անտի նոյն մարդիկ և մօլլաներ, հազար և մի սուտերով, առասպելներով կը գրգռէին թուրք խուժանը, որ վախէն տեղէն չէր կրնար շարժիլ, պատրաստել և որոշեալ ժամուն յարձակել հայոց վրայ: Կառավարութեան կողմէ թուրք խուժանին տրուած գըլխաւոր գրգռումը սա էր՝ «Հայերը Անգլիայի հետ միացած մեր Օսմ. թաղաւորութիւնը պիտի կործանեն, իսլամի կրօնը պիտի ջնջեն և յառաջիկայ ուրբաթ օր ալ տեղիս հայերը զինուած պիտի յարձակին մըզ-կիթներու վրայ ու իսլամները պիտի կոտորեն, ուստի օր առաջ մենք շարժինք և չթողունք, որ անհաւատ հայերը մեզ ջարդեն»:

Յարձակման օր կը որոշուի Սեպտեմբեր 26, երեքշաբթի օրը: Մրիկաները խուժելով կը բաժանեն և կառավարութիւնը հրացան, ուժովէր, փամփուշտ ու այլ զէնքեր բաշխեց անոնց:

Երեքշաբթի օրը ցամաքի և ծովի փօստաները կը հասնին Տրապիզոն: Այդ օրը գործի օր է, մանաւանդ վաճառականներուն: Հայ վաճառականները ու խանութպանները՝ ապահոված կառավարութեան խոստումներէն ու խաբուսիկ գիշերային հսկողութենէն, հիւպատոսներու և առաջնորդարանի ապահովեց յայտարարութիւններէն, այն օր աւելի բազմութեամբ շուկայ իջան, գործերնին քիչ շատ կարգի բերելու, երեք մտքէ չանցունելով, որ կառավարութենէ իրենց դաւ լարուած է:

Ժամը 6-ին էր, թուրք ամբօխը զէնքը ձեռքը սկսաւ դէպի հայոց բանուկ վայրերը խուժել: Նոյն միջոցին զինուորական փող զարնեցաւ և կանոնաւոր զօրքը իրեն օգնական ունենալով թուրք խուժանը, առաջին յարձակումը տուաւ Մէյդանը-Շարգի կողմէ հրապարակին միջ: Կուսակալ Քատրին ալ շրջապատուած թուրք սրիկաներով շուկայէն հոն հասաւ և հրահանգներ տուաւ՝ մատնանիշ ընելով հայ հարուստները մասնաւորապէս սպանել: Ահսան հանդիպող հայը զարնել: Հրացաններու պայթիւնները քաղաքին ամեն կողմէն պայթեցան. խեղճ հայերը յանկարծակիի եկած և բա-

լորովին անպատրաստ, սկսան փախուստ տալ. ամեն անկիւնէ զինւած թուրքեր դուրս ելնելով՝ փախչողները չարաչար մեռուցին, շատ հայեր ալ կարծելով թէ յարձակուը խուժանէն է, վազեցին պահականոցը ապաստանելու, սակայն ամենն ալ զինւորներէն սպանեցան: Յոյներն ալ վատաբար հետևելով իրենց Կաղտնի տրւած պատերին, անվթաբար իրենց կրպակներու և տուներու դռները Կոցեցին փախչող հայերուն երեսին և ոմանք ալ իրենց ապաստանած հայերը մատնեցին թուրքերուն (բացառութիւններ մատով կը համարւին): Առաջարկութիւնը՝ ուզելով գործին հայերու կողմէ եղած ապստամբութեան երևոյթ տալ, պատուէր տւած էր թուրքերուն միայն այր մարդիկը սպանելուստի ով որ կը փախչէր՝ «թէսլիմ օլուն» (անձնատուր եղէք) կը պողպին ետևէն, կարծես՝ թէ հայերը ապստամբեր էին և ճակատամարտ կը մղէին կառավարութեան դէմ:

Սակայն թէսլիմ եղողն ալ, աղաչողն ալ, փախչողն ալ՝ ծեր, մանուկ, երիտասարդ, բազմաթիւ պանդուխտներ, մի քանի կանայք, առանց խորութեան, թրքասերներն ալ, յեղափոխութեան թշնամիներն ալ, բոլորն անխնայ կոտորեցին, ջարդեցին, փշոթեցին, այդ օրը առնւազն 300 հօգի: Գրացի թուրքը դրացի հային զարկաւ, արհեստակիցը իւր արհեստակից հային, ամենն ալ կատաղած գազաններ դարձեր էին. դիակներն իսկ կը յօշոտեն:

Թաղերու մէջ տեսարանը շատ աղէխարշ էր, կանայք, հարսեր, մատաղ տղայք զլուխնին կորուսած, ո՛ր վազնին՝ չեն գիտեր. ոմանք բարձր պատերէ վար կը թռչին, ոմանք կը մարին, նորատի հարսեր, մատաղաշ մանուկնին մէկ ձեռքերնին, միւս ձեռքովն չւան բռնած ահագին բարձրութիւններէ վար կը տղային, տունը մնացած ծեր մարդիկ ածխանոց կը թաղւին, սոսկումը շատ մեծ է. զինւորները, սրիկաները կսկսին տուները մտնել. հարկւրաւորներով և այր մարդիկը պահանջել, զինւորներ ծուկ չօրած պատուհաններուն հրացան կը պարպին, իսկ բաշխողուկներ գտած այր մարդիկը կտոր կտոր կընեն կանանց, տղայոց աչքի առջև:

Անկարելի է այդ իրողութիւնները գրչի առնել, այնչափ սոսկալի, այնչափ վայրենի են: Առտորածը ամբողջ 2 ժամ տևեց քաղաքին մէջ, թէև մինչև երեկոյ, յետընկած տեղեր, սպանութիւնները շարունակեցին:

Մեծ ծառայութիւն մատուց «Ֆրերներու Միաբանութիւնը», որ իր դպրոցին դռները բացաւ փախստական հայերուն՝ շուրջ 2000 հայ (600 կաթողիկ և 1400 լուսաւորչական) ապաստան գտան հոն: Հիւ-

պատոններու և Ամերիկայի միսիօնարին տան մէջ ալ մի քանի հարիւր հօգի պահպանեցան:

Երբ ալ փողոցներու մէջ հայ չմնաց, կուսակալը հրաման ըրաւ հայոց կրպակները և տուները թալանելու:

«Հայդէ, քուզում, խօջա թալանինա պաշային» պօռաւով (դէ՛հ, զաւակներս, խօճայի կողպուտի սկսեցէք, որ ըսել է՝ բան մը մի թողուք, ամենն ալ առէք): Մէկ վայրկեանի մէջ հայ վաճառականներու կրպակներու փականքները կոտորեցան և եղած ապրանքները թաղանեցին. երկաթ դրամարկղներն իսկ կոտորեցին և ստակները առին. կողպուտեցին, թալանեցին, արշտեցին միւս կողմէն:

Առտորածի օրը, որոշեալ ժամուն թուրք գիւղացիներն ալ զինեալ յարձակեցան հայ դիւղերու վրայ. Զեֆանոց, Առմիլա, Պարիան, Թոց, Աղբիտ, Աերանայ, Ապան, Աղբօյ և այլն, և այլն շատ մը հայ գիւղեր հրոյ ձարակ տւին, բաւական թուով հայ գիւղացիներ սպանեցին. կտոր կտոր ըրին Առմիլա գիւղի Մաւեան Տ. Յովհաննէս, Տիվրանոզի Գահիրմանեան Տ. Մաղաքեա և Աերանայի Փափազեան Տ. Մատաթիա ծերունի և ողորմելի քահանաները, բշեցին տարին՝ տաւար, եզ, ոչխար, կով և եղած արմտիքը:

400 հօգի ալ բանտարկեցան, որոնցմէ կէսը միայն արձակեցան, իսկ միւսները դեռ կը մնան:

Ո՞վ հայ եղբայրներ, Օտարէն չենք յուսար դիտութիւն, ձմեռը շուտով վրայ կը հասնի, կառավարութեան ձիրանէն ազատուներն ալ բանտերու մէջ և անօթութիւնէ պիտի ջարդւին:

Թուրքը կը կոտորէ, կուրպացին կը ծաղօէ, յոյնը կանարդէ զմեզ:

Չունինք կեանքի ապահովութիւն, չունինք տէր տիրական, տուն չունինք, անկողին չունինք, հաց չունինք, Օգնեցէ՛ք մեզ.

Հարուստ, աղքատ, ծեր, տղայ, քաղաքացի և գիւղացի, տուներու անկիւնները իրար պլլած՝ գթութիւն, օգնութիւն կը խնդրենք:

Ամիս մը այսպէս՝ մենք կորած ենք, Օգնութիւն, օգնութիւն:

II

ԱԿՈՍԱՏԵՍԻ ՄՐ ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Ասիեցուցիչ, ահագնապէս խուժարութեամբ գործերու ահանառէս չեմ ուզեր անտարբերի մը յանցապարտ լուծութիւնը վրաս առնել, այլ գիտցածս հաւատարմարար կուգամ պատմելու քահանայի թերութեան մասին մէջ, սփոփանք մը փնտռելով հարիւրաւոր մարդկային անմեղ արարածներու գերեզմանական բողոքը գէթ հրապարակելուն մէջ, քանի որ անգոր ահանատես մը եղայ անոնց չարաչար մահան:

Սեպտեմբեր 26-ի (հ. տ.) առտուն էր Ռուսական Ըոգեմաւակին Առևտրական Ընկերութեան «Ազով» շոգեմաւակը ժամը 11-ին Տրապիզոն հասած էր և ես ալ ցամաք ելած էի:

Յանկարծ ժամը 10-ին քաղաքի հրապարակին վրան լսեցան ձեռնարկերի պայթիւններ և շատ չանցած ըսկաւ սոսկալի աղմուկ մը, վայնասուն մը և մոլեգին աղաղակներ. «զարկէ՛ք գեաւուրները»: Խառնիճաղանձ բազմութիւն մը՝ բաղկացած թուրք նաւաւարներէ, բեռնակիրներէ, մսավաճառներէ, զինուած Հէնրի Մարթինի հրացաններով, ռեվոլվերներով, եւթաղաններով և դանակներով, կը խուժէր հրապարակը, կը խուժէր փողոցները, կը յարձակէր հայոց խանութներուն վրայ, անխնայ կը զարնէր դէմն ելած հայը և աւարի կուտար ու կը կողոպտէր անոնց խանութները:

Գիակները շուտով սկսան դիզանալ փողոցներուն մէջ: Սոսկալի էր և հալածանքը փախչողներուն ետևէն. կարծես, վայրի գազաններու որս մըն էր, որ տեղի կուտար. յարձակողը թուրքն էր ամեն հասակի, զոհը հայն էր՝ այր, կին, տղայ, ծեր ու մանուկ անխտր:

Աւելի քան 500 հոգիէ բաղկացած այդ բարբարոսներու խումբը և ոչ մէկ արգելքի հանդիպելով ոստիկանութեան և զինուորներու կողմէն՝ ահ ու սարսափ սկսաւ սփռել բովանդակ քաղաքին մէջ:

Գրիչս անգոր է, գէթ մերձաւոր գաղափար մը տալու այն եղերերգական (tragique) արհաւիրքի մասին, որ պատեց քաղաքը, իր ամեն մասերուն մէջ, քաղաք մը, որ այնքան մօտիկ էր քաղաքակիրթ Եւրոպայի կեդրոնին: Հրապարակն այն արիւնհահեղ տեսարաններէն մէկը կը ներկայացնէր, որոնք կը յարուցանեն մարդու երեւակայութեան առջև Ռամանի կամ Բարթոլոմէան ջարդերուն յիշատակները, վաղուց անհետացած

Լեռայի մէջ:

Ո՛հ, սոսկալի, անհունապէս սոսկալի էր լսել մահահանգ երկիւղէն սարսափած կիներու, աղջիկներու, տղոց աղէկուոր ճիչն ու աղաղակը, որոնք իզուր օգնութիւն կը հայցէին այդ մարդակերպ գազաններէն:

Հրացանի հարածներու պայթիւնը, արձակած քարերու շալիւնը, կոտորած ու ջարդած գոններու ձուրնիւնը, փրցուցած առններու և վաճառանոցներու դղրդիւնը, մոլութեան հասած թուրք խուժանին աղաղակը, անկերպարան դիակներու կոյտերը, երկու սեռի և ամեն հասակի հայերուն, որ արեան լճերու մէջ կը լողային—մարդկային չարաչարներու համայնապատկեր մը կը պարզէին:

Նահանգապետը, Գատրի բէյ, դուրս հանեց ոստիկաններ և զօրք (թուով հազիւ 200 ամբողջ Տրապիզոնի և իր բերդին համար) և թերևս հրամայեց իսկ անոնց հայերը պաշտպանել, սակայն ուրիշ բան մը տեղի ունեցաւ: Զինուորները իրենք ալ թուրք վարակելով այդ բերաւոր խուժանի գիշախանձ խանդավառութենէն, իրենք ալ սկսան զարնել ու աւարի տալ հայերը:

Ես ալ չկրցայ մնալ քաղաքի մէջ և շոգեմաւ նետեցի ինքզինքս:

Բարեկամս, պ. Ա. Գ. Աբրաշկելիչ, որ Ռուսական Ըոգ. և Առևտրական Ընկերութեան Տրապիզոնի գործակալի փոխանորդն է, կը պատմէ թէ ինչպէս իրենց պաշտօնատեղիէն հանդիսատես ելած են այդ արիւնոտ տեսարաններուն: «Ճիշտ է, կը գրէր, կոտորածն սկսելէն 20 վայրկեան չանցած հրապարակին վրայ երեցան մէկ մէկ «զապթիէ», բայց և ոչ մէկ զինեալ թուրք ձերբակալեցին, ոչ մէկ կերպով արգելք ըլլալ փորձեցին կոտորածի շարունակելուն: Միայն ժամը 11-ին երեցան 12 զինուոր սպայի մը առաջնորդութեամբ և իսկոյն տեղաւորեցան հրապարակին այլ և այլ կողմերը, հրացաններն պատրաստ բայց ասոնք ալ ոչ ոք ձերբակալեցին, և, ընդհակառակը, կարելի էր կասկածել թէ ազոնք ալ մասնակից էին այդ կոտորածին»:

Տեսնողներ կը պատմեն թէ շատ անգամ անգէն թուրքեր մասնանիշ կրնէին զինուորներուն փախչող հայ մը, և ահա զինուորը նշանակ կառնէր և կը տապալէր խեղճ փախստականը: Ես ինքս կրցայ այդ հաստատել որովհետև «Ազով» ցամաքին մօտ խարսխած ըլլալով, շոգեմաւ կամրջակէն շատ դիւրութեամբ կրցանք դիտել մեր դիտակներով փողոցներու մէջ անցած-դարձածը, շուրջիւ քաղաքին զառիվեր դիրքին, որով բոլոր փողոցները կը մերկանային մեր աչքին առջև, բացի հրապարակէն, որ մասամբ միայն կը մտնէր մեր տեսողու-

Թեան շրջանակին մէջ:

Երբ շոգենաւ հասայ, պատմեցին ինձ՝ թէ 11 հայ թուրքերու եւթաղաններէն ապաստան մը գտնելու յուսով նետուած էին նաւակներու մէջ և հալածական՝ դիմեր էին ամենէն մօտ եղող շոգենաւը՝ Աւստրիական Լեոյտի «Վէնիս»-ը. բայց շոգենաւէն իսկոյն վեր առած են սանդուխքը և ուէլովկերի հարւածներով հեռու վանած են խեղճ փախստականները, որոնք և փութացեր էին ապա ուսական դրօշակի ներքև ապաստան որոնելու: Մեր շոգենաւին հասած չհասած, հոն աշխատող թուրք գործաւորները՝ իրենց գլուխ ունենալով ընկերութեան ծառայութեան մէջ գտնուող նաւուղի (լոցման) Իսմայիլը, կը յարձակին այդ խեղճերուն վրայ, նոյն իսկ ուսական դրօշին ներքև խողխոխողելու և ծոփը թափելու անոնք: Բայց վրայ կը հասնի նաւապետի օգնականներէն պ. Ա. Ի. Կոնստանտինով կը կորզէ Իսմայիլի ձեռքէն անոր դաշոյնը, և նաւաստիներու օգնութեամբ կը զսպէ այդ սրկիաները և ներս կառնի ապաստան փնտոող հայերը. շատը ծանրապէս վերաւորած գնդակներով և եւթաղաններով, որոնց հարկ եղած բժշկական օգնութիւնը կուտայ փութով նաւուն բժիշկ պ. Ն. Պասալիկի և կը կատարէ նոյն իսկ կարևոր վերահատուցումներ (opération):

«Ազով» փոստային շոգենաւ ըլլալուն, պէտք է ճամբայ ելէր Տրապիզոնէն նոյն Սեպտեմբեր 26-ին, բայց ժամը 1-ի մօտերը շոգենաւ եկաւ ուսաց ընդհանուր հիւպատոսի լիազօրութեամբ պ. Աբրաշկէի, և բացարելով նաւապետին քրիստոնեաներուն սպառնացող վտանգը, հրամայեց չմեկնել, այլ մնալ պ. հիւպատոսի արամադրութեան ներքև, պատրաստել բոլոր մակոյկները, ազատելու համար ուսահայտակները պ. հիւպատոսի կողմէն տրւելիք նշանին վրայ:

Պ. Աբրաշկէի կը պատմէր՝ իր հիւպատոսարան երթալու միջոցին, իր անցած փողոցներուն վրայ գտնուած բոլոր հայ խանութները աւարի առնուած և փնասուած էին. տեսած էր հայու եօթը դիակ, ոմանք գնդակներով սպանուած, ոմանք դաշոյններով խողխողած, ոմանց գլուխը ջախջախուած, ոմանց կոկորդը կտրտած: Իսկ իր պաշտօնատեղիէն շոգենաւ եկած ատեն փողոցի մէջ համրած էր 44 դիակ և, ինչպէս կը գրէր ինքը, վեցսարսաբին տեսած էր ուրիշ 45 դիակ ալ: Հրապարակին վրայ գտնուած բոլոր հայ խանութները գտած էր աւերած և փողոցի մէջ թափթփած, ցան ու ցրիւր տեսնուէին վաճառականներու տոմարները, թուղթեր և անարժէք նիւթեր: Հանգիպած էր նաև քանի թուրքերու, որոնք կը փութային իրենց տուները և այլ իրեղէններով բեռնաւորած, հաւանօրէն,

ամենքն ալ գողցած հայ խանութներէն:

Պ. Աբրաշկէի կը պատմէր նաև յատկանշանական դէպք մը: Երբ ինքը քանի մը զապթիաներու հետ նաւակ կը նստէր շոգենաւ գալու՝ պ. հիւպատոսին հրամանն յայտնելու համար, զապթիաներէն մէկը մօտաւոր վերնատան մը պատուհանէն նայող հայ մը նըշմարելով, իսկոյն հրացանն ուղղած և նշան առած էր զարնելու համար, բայց պ. Աբրաշկէի արգելած էր բլթակը քաշելուն, որով հայը ժամանակ ունեցած էր հեռանալու: Զապթիաներու և ոստիկաններու այդ օրինակ վարմունքէն կարելի էր եղբակացնել, կրսէ, թէ անոնց ալ պատւիրած ըլլալու էր կոտորածին մասնակցել:

Պ. Աբրաշկէի իր պաշտօնական յանձնառութիւնները կատարելէն ետք՝ փութացեր էր տուն երթալու իր ընտանիքն ապահովելու համար, սակայն իր բացակայութեան միջոցին, բարի դրացի մը, հազարապետ Աֆեթ պէյ իր տունը հրաւիրած էր անոր ընտանիք և պաշտպանած: Պ. Աբրաշկէի իր տան մէջ ապաստանած կը գտնէ բազմաթիւ հայեր, և նոյն Աֆեթ պէյի միջոցաւ անոնցմէ 16 կին և 11 տղայ խրկել կուտայ իրենց տները և 14 այր մարդ բերդի մէջ պատսպարել կը յաջողի:

Հետեւեալ օրն իսկ իր տունը պինպաշի հսկողութեան յանձնելով, իր ընտանիքը կը փոխադրէ պ. հիւպատոսին տունը:

Սեպտ. 26-ի իրիկան դէմ հրդեհներ սկսան ծագել, 26-էն 27-ի գիշերը քաղաքին շրջակայքը կը թաղէր բոցերուն մէջ. ամբողջ գիշեր երկինքը արիւնոտ լուսաւորութիւն մը կը պատէր:

Սեպտ. 27-ին ժամը 5-ին հիւպատոսը պատշաճ դատեց՝ թի իր ընտանիքը և թէ իրեն ապաստանող հայերը, թուղ 100, փոխադրել տալ շոգենաւ: Այդ դժբախտները մեծ մարդավարութեամբ ընդունեց նաւապետ Բերբերովիչ և հայրական խնամքով հոգաց անոնց բոլոր պէտքերը: Ապաստանողներէն էր և Ռ. Շ. և Ա. Ընկեր. գործալը, Սերաֆիմով, որ կը հաւատէր՝ թէ պաշտօնական տեղեկութիւններու համաձայն 1000-ի կը հասնէր սպանուածներու թիւը: Շրջակայքերէն լուր չկար, թէ և կրսէին, թէ երեք հայաբնակ գիւղեր՝ Զեֆանոս, Պայրամ, Թոչի հիմնայատակ ըրած և կրակի տուած են: Ազով բացատրեցաւ մեր 26-ի իրիկան տեսած երկնքի կարմրութիւնը և հեռաւոր բոցերը:

Քաղաքի միւս մասերուն մէջ անցած-դարձածի մասին մանրամասն տեղեկութիւն չունինք. դիտակներով հետեւեցանք այդ մարտազոհին, տեսանք կնոջ մը սպան-

ւելը ծովափին մօտ, երբ նաւակներու մէջ օրնութիւն դանել կը յուսար, նշմարեցինք դիակներու կոյտեր, որոնք երեք օր մնացին փողոցներուն մէջ: Դիտեցինք թուրքերու խմբակներ, որոնք ծովափը պատելով կանգ կաննէին տեղ տեղ և կսկսէին քարհոծել ծովուն դուրս նետած դիակները. պատմողներ կան թէ քանի մը օր շարունակ թուրք սրիկաններու գլխաւոր գլարձութիւնն է եղած այդ:

Հոկտ. 2-ին եկաւ ռուսական կէս-մարտանաւ «Յէրէց»-ը, որուն ընդառաջ գացինք՝ հիւպատոսին մէկ պաշտօնագիրը տալու հրամանատարին, և ապա հետեւեցանք անոր մինչև քաղաքին առջևը:

Հոկտ. 8-ին ռուսական դրօշին ներքև դուրս հանեցինք մեզ ու սպաստանող հայերը և շոգենաւը ձամբայ ելաւ իր ընդհատած 19-րդ ուղեգրի՞նը կատարելու:

Նոյն օրն էր, որ կտանայի Աբրաշիւնիչէն հետեւալ լրացուցիչ տեղեկութիւնները. «Տրապիզոնի շրջակայքի հայաբնակ գիւղերուն մէջ նոյնպէս սպանւած են հայեր և տները աւարի մատնւած ու կրակի տւած: Երջակայքին մէջ սպանւած են մերձաւորապէս 1150 հոգի, բուն Տրապիզոնի մէջ մօտ 1650 հոգի:

«Ծովը շարունակ դուրս կը նետէ հայերու դիակներ, հաւանօրէն նաւակներու մէջ սպանւած: Քսան ու վեց տարեկան հայու մը վրայ նաւթ լեցուցած և պրած են, ուրիշ մը գլխատած են հրապարակաւ»:

Ես վերջացուցի. չափազանցութիւն չկայ գրածներուս մէջ ընդհակառակը, շատ բան թերի է. գրի առի, ինչ որ ես տեսայ անձամբ ցամաքին վրայ և շոգենաւէն՝ գիտակից և ինչ որ Աբրաշիւնիչ կրնար տեսնել իր պաշտօնատեղիէն. հիւպատոսարան և իր տունը և դէպի ծովափը աանող փողոցներուն վրայ:

Անշուշտ պիտի գտնուին և ուրիշ վկայութիւններ լըրացնելու համար Սեպտեմբեր 26-ի թուրք-մոնղոլական բարբարոսութեան այդ շարհուրելի դրամին նկարագրութեան ամբողջը:

Դր. Ն. ՊԱՍՆԱՍԿԻՆ

Օ Ր Դ Ո Ւ
Կ Ո Տ Ո Ր Ս. Ծ Ի Ե Ր Կ Ի Ի Ղ

Թերեւս վերջին նամակս ըլլայ ասիկայ
Պատահած ու իմացած դէպքերէ ետքը, դուրս շփոթած, սիրտս ցաւած՝ կը ջնսամ՝ քանի մը քան գրել:

Եւրոպական հեռագրները ամբողջ աշխարհի ձախ տւած կը լլան, հարկաւ, Պոլսոյ, Տրապիզոնի մէջ պատահած սոսկալի կտորածի առթիւ:

Ահաւասիկ անուղղակի կերպով մեր իմացածը Տրապիզոնի մասին.—

Բահրիի սպանելու փորձից հինգ օր յետոյ, երեքշաբթի, Սեպտեմ. 26-ին, կէս օրւան ժամը 5-ին, հրամանատար փաշայի հրամանաւ, թուրք խուժանը սուրերով ու բրերով կը յարձակի շուկայի ժողողդեան վրայ, ու նախապէս որոշուած ցուցակի մը համաձայն, ամբողջ նշանաւոր հայերը սրի անցնելով, կը կողոպտեն խանութներուն մէջ գտնուած ապրանքները ու այդպէս ժամը մինչև երեկոյեան 11-ը շուկան անմեղ դիակներով կը լեցի: Մինչև երեք օր հայերու ու եղբայրներու արիւնը կը ներկէ փողոցները ու երբ գետինը սպանւածներով լեցւած էր, կուսակալը հրաման կընէ ընտանեաց, որ իրենց դիակները գան, վերջնէն ու թաղեն:

Սակայն ցարդ ստոյգ ու մանրամասն տեղեկութիւն չենք առած. յառաջիկայ ռուսական թղթատարով անհամբեր լուրերու կսպասենք:

Կտորածէն վերջը, ութը օր է, որ ռուսական շոգենաւը Տրապիզոնի մէջ կսպասէ. վաղը պիտի գայ հոս: Տրապիզոն շատ մը ընտանիքներ նաւահանգիստը սպասող ութը շոգենաւերը գացեր, ապաստանելու են: Դեռ վերջը չենք գիտեր՝ ի՞նչ եղաւ:

Թուրք խուժանը հոս ալ, ուրբաթ օր, Սեպտ. 29-ին, կէս օրւան ժամը չորս ու կէսին, զինուած յարձակում մը տւաւ:

Ժողովուրդը բողբոջին շարած՝ վերջին ճգնաժամին կսպասէ: Բայց ամբողջ երիտասարդութիւնը զինուած պատրաստ է կուելու:

Երբ տեսանք, որ առձիկ ամբոխը եկաւ շուկային մէջ լեցեցաւ, արդէն գիմագրաւելու կազմ ըլլալով, զէնքի գրուիւր վազեցինք: Բայց կառավարութիւնը խոհեմութիւն համարելով, ցրել տւաւ այդ դազանացած արիւնարբու ամբոխը: Այսպէսով անցուցինք շարժմ ու կիւրակի օրերը:

Վիւրակի օրը, թուրք աղաները խորհուրդ կընին, դիշերը յանկարծական յարձակում՝ մը տալով կտորել բոլոր հայերը ու այդ նպատակաւ գիւղերը շուր կը դիկին: Մէյ մ'ալ տեսանք, որ 60 հոգի մէկ շուկաները իջնալով առձիկ աղաներու գրասենեակներու մէջ ցրեցան, մէկ ուրիշ մաս մը ալ՝ գիշերը

գալով, ընդամենը 600 հոգի զննեալ, առաւօտուն պիտի յարձակէին հայոց վրայ ու նոր կոտորած մը՝ աչ տեղի պիտի ունենար: Բայց երևի բնութիւնը գթաց ու չուզեց այդ օր հայերուն ջարդը: Յանկարծ օտակալի որոտումներ ու սեցած երկնքի վրայ երևցած փայլակները մեծ վախ ազդեցին դաւադիր փանատիկոսներուն վրայ այնպէս որ մենջող որոտումներուն հետ մէկտեղ եկած տեղատարափ անձրևախառն կարկուտէն ետքը, ամբողջին կէսը ահաբեկած կը ցուի:—Երկուշաբթի օր սյուտարափ շուկան կրկնեց: Ու յանկարծ ժամը 7-ին առեկները թուրք աղաները հրաման կուտան՝ հայերը ջարդելու:

Անմիջապէս 100 հոգի շուկան կուգան, կը մտնեն, իսկ 200 հոգի ալ ժամ մը հեռուն կսպասէր: Հայ ժողովուրդը լալով ու աղօթելով սկսաւ խնուածները գոցել ու տուն փախչել: Այս յարձակումը առաջինէն զօրաւոր էր: Այդ բազմութիւնը ուղղակի կառավարութեան գիմեց հրաման առնելու համար: Զարդը անխուսափելի պիտի ըլլար, թէ որ այդ պահուն իսկ կառավարութիւնը հեռագիր չստանար՝ թէ ուսական նաւատորմը Տրապիզոն մտած է:

Կառավարութեան կողմէ այդ մարդիկը թէև ցրեցան, սակայն աղոնցմէ մէկ քանիները շուկան գալով այսօր, կըսեն թէ վաղը ձեզի անպատճառ սրէ պիտի անցընինք: Ըուտով տարածեցաւ այս լուրը շուկային մէջ: Մեր մենծ աղաները կառավարութեան գիմեցին՝ փաղան ապահովութիւն խնդրելու: Գայմագամը կըսէ՝ թէ գացէք, հանգիստ եղէք, մի վախնաք:

Արծեմ՝ թէ վաղը ամբողջ շուկան պիտի փակ ըլլայ: Տեւաններ, վաղը վերջին օրն է մեր նահատակութեան. մենք ալ զոհուինք: մեր պանդուխտ եղբայրներուն հետ: Վաղը ամեն հայ պատրաստ է կուելու մինչև վերջին շունչ: Թերևս վերջին նամակս պիտի ըլլայ այս, ու մեն յուզման մէջ կշտապիմ այս տողերը ձեզի հասցնելու: Մահայն գեռ չեմ գիտեր՝ թէ վաղան գալիք շագանակին պիտի կրնամ հասցնել այս նամակս, եթէ ողջ մնամ, անմիջապէս շարքերը ձեզի կը հաղորդեմ:

Յ. Գ. Գեռ չենք գիտեր՝ թէ ինչ պիտի ըլլայ մեր վիճակը: Երեկ գիշեր թուրքերը մեծ պատրաստութիւն տեսեր են, ոչ թէ քաղաքացիք, այլ դիւղացիք ու մ'ուհաճիր ըսած աւազակաբարոյ ցեղը: Այսօր վերջին ճգնաժամուն մէջ ենք: Պիտի կուրկնք:

Մ'ա հ կամ Աշատութիւն:

Ա Գ Հ Ի Ս Ա Ր Ի

Կ Ո Տ Ո Ր Ա Ս Ը

Պոլսոյ աղետալի կոտորածի ձայնը անարձագանք չըմնաց դաւառներուն մէջ այ: Թուրք խուժանը, գրգռուած կառավարութեանէն, մայրաքաղաքէն սկսելով, ամեն կողմ, ուր որ կը դանւի հայ ազգաբնակութիւն, իրենց Պոլսոյ հարազատներուն օրինակէն գրգռուած, միակ գաղափարով մը տոգորուած են հիմակ, այն է՝ յարձակել հայերի վրայ, սպանել, կոտորել և թալանել անոնց ստացածքները: Պոլսոյ և Տրապիզոնի սարսափներէն վերջը, Ազհիսարի ջարդը խեղճ հայերուն կոտորածի վերջին ապացոյցը և փաստը չպիտի ըլլայ ըսածներու:

Ազհիսար փոքրիկ աւան մը է, Կէյվէհ և Մէքէճէի մէջ տեղ, Անատոլիո երկաթուղիի վրայ, Իզմիտի մութխարիթութեան ներքև, 70 տուն հայով և 150 տուն թուրքերով:

Ազհիսար թէև փոքրիկ, բայց շնորհիւ իր կեդրոնական դիրքին, շրջակայ հայ և թուրք գիւղերու աւերի կեդրոնն է և հետզհետէ զարգանալուն վրայ: Հայերը թէև վերջերս հաստատուած էին հոս, այլ շնորհիւ իրենց աշխատասէր ոգիին՝ մեծագոյն դիրքն ունէին առևտուրի մէջ: Ահրջին ժամանակներս միւրիւր մը ունէին, վատ և հայատեաց սուլթանի պաշտօնէութեան ամենացած տիպար մը, որ փորձանք մը եղած էր հայոց գլխին: Հակառակ նիկոմիդիոյ առաջնորդին քանկոս գիմումներուն, միշտ մնաց հաստատ իր պաշտօնին մէջ:

Սեպտեմբեր 27-ին, չորեքշաբթի, Ազհիսարի պազարի օրն էր: հոս գլխաւոր քաղաքներ և աւաններ յատուկ առևտրի օր ունին պազար ըսած, ուր շրջակայ մօտ և հեռաւոր գիւղերէ կուգան գնումներ ու ծախումներ ընելու համար: չորեքշաբթի օրն ալ Ազհիսարի օրն է:

Մաս մը հայեր Պոլսոյ սարսափներէն համակուած, չէին դացած պազարը: իսկ անոնք, որ անհրաժեշտ պէտք ունէին և տեղացիները մանաւանդ, անհոգ և անգիտակ իրենց վաճառատուներն և կրպակները բացած, իրենց ապրանքները ծախելու կըբազդին:

Եւ ահա, յանկարծ տաճկական ժամը վեց ու կեսին ասանները թուրք խուժանը կը յարձակի հայերուն վրայ և կսկսին զարնել, սպանել և ապա թալանել:

Ձխաւոր և Տեաւակ ոտակահաններու խումբ մը, որ ներկայ էր, ամենէն չը միջամտէր: միայն անոնց պետոր անտարբէր աչքերով պահ մը դիտելէ վերջ այս աղէխարչ անտարանը, կը մեկնի դէպ ի Յէյփէ, երկուս ու կէս ժամ Տեախ, խմաց տալու գայնագամին:

Արիւնաբոու թուրքերն կատարած կը շարունակին իրենց ջարդը՝ սպանելով և սպանած խեղճ զոհերը, մտած կամ չմտած, քաշկրտելով կը տանեն՝ ջրհորները նետել և կամ նոյն իսկ շուկային մէջ թաղել:

Շուկային թաղանձմը կը լինայ և կսկսին յարձակել տուններու վրայ. երբ երկու տուն հագիւ կողոպտած էին, կը հասնի գայնագամը, որ կը սպէ ամբոխին կատարութիւնը:

Գիշերը կը հասնի Եգիպտի մութէսարի՞ժը զօրքերով, իսկ Տեաւեալ օր Եգիպտի առաջնորդ սրբազան Ստեփաննոս եպիսկոպոսն:

Անկարելի է դոհերու զաւահներուն, այրիներուն և վերաւորներուն սրտանմիկ անտարանը պատմել հոս: Եկեղեցիին մէջ լեցած իրենց լացով ու կոծով օգը կը լեցնեն:

Նոյն օրն, ինչպէս և յաջորդ օրը դիակները կը հանին ջրհորներէն, թաղած տեղերէն և քննութիւն կատարելէն վերջ կը տանեն, կը թաղեն:

Ող մնացողներէ շատերը՝ այլևս չուզելով մնալ այդ անիծեալ անտան մէջ, շօջակայ հայ գիւղերը կը ցուին *):

**ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ
Ր Է Փ Օ Ր Մ Ե Ն Ե Ր**

Սուլթանի կառավարութիւնը որէփօրմները ընդունել էւ;

Բայց ի՞նչ որէփօրմներ — ոչ թէ Մայիսի 11-ինը Սօլիսթիւրի յաւելածով, որով վերջինս պահանջում էր, որ յԱճրահսկոյ մնացուց կօմիտէի՝ անգամներէից երէքը լինեն եւրոպական պետութիւնների գրոշօմանները, ոչ թէ երէք պետութեան ներկայացուցիչների կազմած Մայիսի 11-նը, այլ վերջինն վստիխութիւնների ենթարկած և այն էլ յօգուտ սուլթանի կառավարու-

*) Սիւրբ ինկիլը մեզ ուղարկել է թէ պատմաւորների եւ թէ վկայութեանը անտանաբար ցակել՝ սրբ անպի սղութեան պատմաւոր անկարող եղանակ փակելով պատմաւորների թիւը 31 է, իսկ վկայութեանը ցակել 33:

թեան և ոչ տերրորի ենթարկած ժողովրդի:

Թէև «Նոր-րէփօրմները» իրենց ամբողջութեամբ յայտնի չեն, բայց յայտնի է, որ եւրոպական կօնտրօլ չկայ, որ Սօլիսթիւրի յաւելածը ոչնչացրած է, ոչնչացրած է նոյնպէս այն, որ սուլթանի կառավարութիւնը պարտաւորում էր յայտնել եւրոպական պետութիւններին կիսապաշտօնապէս այն անձանց անունները, որոնք վալի են նշանակուած, իսկ Շաքիր փաշան ձանաչում է իբրև ընդհանուր կառավարիչ:

Դիպլօմատիան՝ անկարող լինելով բողոքովին մի կողմ քաշել և երկու թշնամիներին թողնել մէկ մէկու դիմաց, օգտուեց այդ յուզումների ու երկիւղի ժամանակից և շարտեց մի այլանդակ բան մարտիրոս հայ ժողովրդի ճակատին, յուսալով, որ այդ այլանդակութիւնն անգամ կարող է բաւարարութիւն տալ երկիւղի մէջ գտնուող ժողովրդին: Նա հայ ժողովրդի վերաբերմամբ իւր սպաննալիքը կատարեց, որ մի պատրակ էր՝ դուրս գալու այն դժւարութիւններից, որոնց մէջ էր ընկել:

Դիպլօմատիան իւր այս գործով հաստատում է չը դիտենք քանի երրորդ անգամ, որ երբէք, ոչ մի ժողովուրդ չպիտի յոյս դնի նրա վրայ, որ դիպլօմատ աւած էակը անսիրտ, անզգայուն արարած է, որի համար չկայ ոչ մի սուրբ բան, որի համար մարդկային տանջանքները ոչինչ են — նրա համար միայն կայ, ինչ որ էլ ուզում է լինի, պետական շահերը, սրանցից դուրս նա ոչինչ չի ձանաչում: Նա գործում է, նա պահանջում է դրական ձևով, նա ուբակոծում է, անթիւ ու անհամար զոհեր է անում, երբ նրա պետական շահերը այդ պահանջում են. բայց քանի չկայ այդ, նա միայն խաղեր է անում խաբելու թէ յուզած և թէ տանջուող ժողովուրդներին:

Սասունի կոտորածից սկսած Հայկական խնդիրը ունեցաւ մի քանի շրջաններ՝ մի քանի գոյներով և երբէք դիպլօմատիան անկեղծ չէր, ոչ միայն հայ ժողովրդի վերաբերմամբ, այլ և իւրաքանչիւրը աշխատում էր մէկ մէկու խաբել և օգտուել՝ հանդամանքից՝ աւելի ազդեցութիւն ձեռք բերելու Օսմանեան պետութեան մէջ:

Պիտաւոր հակառակորդներն էին Անգլիան և Ռուսիան, իսկ հասարակապետական Ֆրանսիան միայն «ձայն էր պահում»: Եւ որէփօրմների ընդունելը այսքան ձրգձգելու գիտաւոր պատճառը հենց այս «հակառակութիւնն» էր: Եւ ո՞վ եղաւ յաղթողը. — սուլթանի կառավարութիւնը՝ ուսու-ֆրանսիական դիպլօմատիայի ուսերին նստած: Եւ ահա շնորհիւ եւրոպական դիպլօմատիայի, ոճրագործը, դահիճը յաղթութիւններ է սա-

նում, նա ղանց է կացնում" ղիւր ըէֆօրմները" սա մի փառաւոր ապտակ է ամբողջ քաղաքակրթեւած աշխարհին ու գլխաւորապէս Հայկական դատը պաշտպանողներին, իսկ մի ծաղը, մի հեգնութիւն նրան սպանացողներին:

Տարուց աւելի քաշքշելուց, մեծ մեծ խոստումներից յետոյ, այսօր դարձեալ դահիճը իրենն արաւ. նա հենց սկզբից պնդում էր, որ սկզբունքով ընդունում է ըէֆօրմները, բայց ոչ միայն հայերի համար, այլ ամբողջ Օսմանեան պետութեան, որ նա Հայաստանն անուշով երկիր չի ճանաչում, այլ իր ցանկացած ըէֆօրմները կը մտցնի Անատոլիայի մէջ. հենց այդ նըպատակով էլ նա նշանակեց Շաքիր փաշային ընդհանուր կառավարիչ, որին պետութիւնները մերժեցին ընդունել, և նա արաւ իր ասածը. դիպումատիքական տեսակետից նա տարաւ ամենափայլուն յաղթութիւն: Իսկ յեղափոխական տանում է նա մի որ և է յաղթութիւն, ապտակում է նա յեղափոխականներին. ոչ:

Դաշնակցութիւնը մերժեց Մայիսի 11-ի ըէֆօրմները պնդելով, որ նրանք ոչինչ չեն տալիս, որ իրերի դրութիւնը չեն փոխում, հետեւապէս և Դաշնակցութիւնը ոչ միայն ղինաթափ չէ լինում, այլ և իւր գործունեութեան, իւր տակտիկայի մէջ ոչ մի փոփոխութիւն չէ մտցնում: Իսկ այդ անամօթ խաղից յետոյ ի՞նչ է մընում մեզ ասել:—Ոչինչ, միայն կրկնել միշտ յեղափոխութիւնն է միակ միջոցը, որ մեզ կազատի ներկայ սարսափելի դրութիւնից:

Հայ ժողովրդի դրութիւնը աւելի քան թէ կրիտիքական է և ներկայ ծանր ըրպէս պահանջում է ամենալուրջ գործունեութեան հետ և ամենաեռանդուն գործունեութիւն. մի ըրպէ կանգ առնելը կորուստ է, դա կարող է մահացու լինել, պիտի անընդհատ շարունակել յեղափոխական շարժումները, ղինելով ժողովուրդը. ղսութեանական ամենանորաբոյն ըէֆօրմները մի ծաղը, մի սատանայական հեգնութիւն են հազարաւոր ղոհերի յիշատակին. արեան միջից պէտք է այդ յետ շարունակել նրանց ճակատին, որոնք առ ոչինչ են համարում հազարաւոր ղոհերը, արեան լճակները, աւերակ դարձած երկիրը:

Սուլթանի կառավարութիւնը մի ձեռքով կատորածների հրամաններ է տալիս, միւս ձեռքով ղրարենորդութիւնների իրադէ" է հրատարակում ղԱնատոլիայի իւր սիրելի ժողովրդի համար". պէտք է լաւ հասկանալ այս դրութիւնը, պէտք է ըմբռնել նրա մեքենայութեան ամբողջ ուժը. այս տեղ թաղանած է մի դժոխային մեքենայութիւն, մի մեծ դաւադրութիւն. Սուլթանի խորամանկ պետական մարդիկը ուղում են խոր քնով

քնեցնել, ուղում են հայ ժողովրդի մէջ բաժանումներ առաջ բերել, նրան հեռացնել յեղափոխականներից ու ղինաթափ անել, այսինքն միամտացնել, թուլացնել, յուզմունքը ու գրգռումը ոչնչացնել և հետզհետէ, ստիճանաբար, աւելի հմուտեամբ արիւնաքամ անել, լուռ ու մունջ խեղդել, սպանել: Նա այնտեանի բարենորոգումներ է խմբագրել ու անցկացրել, որ իւր ղոհը ամբողջութեամբ միշտ մնում է իւր ձեռքում, հետեւապէս կարող է իւր դժոխային նպատակին հասնել— ոչնչացնել հայ տարրը Տաճկահայաստանից:

Արկնում ենք, լաւ պիտի հասկանալ այս դժոխային մեքենայութիւնը և մի ըրպէ ներկայ դիրքը չպէտք է փոխել, պիտի շարունակել, աւելի լաւ է կուել և պատաւոր մահով մեռնել, քան արիւնաքամ լինելով, իբրև սարուկ ոչնչանալ:

Եւ դաղթականների, պանդուխտների, էմիգրանտների վերագործը, որ ինչպէս Մայիսի 11-ի, նոյնպէս էլ սուլթանական ըէֆօրմների կետերից է, նոյնպէս մեքենայական դիտումով է մտցրած—թակարդ է լարած, ուստի պէտք է ղգոյշ լինել և հայրենիք վերադառնալ ոչ իբրև ղխաղաղ ղինական", այլ ղէնքը ձեռքին...

Ոչ, չպէտք է հաւատալ մեր երդուել թշնամուն, նա խաբէբայ է. ոչ, չպէտք է հաշուել, չպէտք է մի ըրպէ դադարել յեղափոխական շարժումներից:

Ձէ՞ որ նա միաժամանակ մեզ դասեր է տալիս, չէ որ նա շարունակում է կոտորել. և պէտք է աւելի քան սխմար ու ապուշ լինել հաւատարմ ներադոյն վիժմունքին և ձեռնպահ մնալ: Ամենամաներէի սխալը կը լինի, դա ինքնասպանութիւն կը լինի. ներկայ ըրպէս պահանջում է կուել և եռանդուն կուել. բայց հասկացած, չափած, կշռած կուել, ի նկատի ունենալով թշնամու ուժը ու դիրքը: Ներկայ ճանապարհից չպէտք է շեղել, նա պիտի շարունակել. խուսափելը մահ է, իսկ կուելը կեանք. և մենք կեանք ենք փնտրում:

Ն Ա Ք Ի Ր Փ Ա Շ Ա Յ Ի
 Ը Ն Դ Ո Ւ Ն Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը
 (Ն Ա Մ Ա Վ Կ Ա Ր Ո Ւ Ն Ո Յ)

Ներկայումս մենք հանդիսատես ենք բաւական հետաքրքիր ներկայացման մը. Գլխաւոր դերասանը միւշիք Ահմետ Շաքիր փաշան է, որը բարեկարգ էր դէր ու ղ հոս կեանք է. Գժբախտութիւնը սակայն նրանում

է, որ միւս գլխաւոր դերասանը՝ Հայ ժողովուրդը, որը մինչև այսօր երկար տարիների ընթացքում շատ մեծ ախորժակով կը մասնակցէր այդ տեսակ ներկայացուցմանը և երևակայականը ընդունելով իրականութեան տեղ, շատ լաւ կը կատարէր իր ստանձնած դերը, — այդ ժողովուրդը այս անգամ կատարեալ բացակայ է:

Ըաքիր փաշան սկսեց իր դերը, թէև յանպատրաստից, սակայն շատ մեծ շքով, ցանկանալով շացուցիչ դէկորացիաներով Տրապուզուրի թէ հանդիսականներուն և թէ իր ապագայ ընկերակիցներուն: Տրապուզուրի շացուցիչը, նա իզուր թափառեց թէ գլխաւոր և թէ երկրորդական փողոցներով, նստած իր փառաւոր կառքի մէջ, շրջապատուած փայլուն շքեղութեամբ: Իզուր արդարութեան պաշտպան, չարերին հաջածող, բարիներին հովանաւորող միջնադարեան ասպետի դիմակը դրած՝ նա դէս ու դէն ընկաւ և «գործ» փնտրեց: Այդ մի տեղէն, ոչ մի անձնաւորութեանէն և ոչ մի դիմում...

Ասպետական քնքոյշ սիրտը կտորած, մխիթարելով իրեն նրանով, որ Տրապուզուրը դեռ ևս իր բուն գործունէութեան ասպարէզը չէ, Ըաքիր փաշան իր քայլերը ուղղեց դէպի Արին, բայց այս անգամ աւելի մեծ շքով, թնդանութեամբ, բազմաթիւ զօրքով, երաժշտական խմբերով և այլ շացուցիչ պատրաստութիւններով, վերագրելով, երևի, իր Տրապուզուրի անաջողութիւնը արտաքին փայլի նւազութեան: Ասպետի դիմաւորող բազմաթիւ (5000) տաճիկ ամբոխի, յոյն հասարակութեան ու մի քանի օտարների մէջ և ոչ մի հայ... չնայելով, որ կառավարութեան կողմից դիմումներ էին եղած թէ ուղղակի և թէ անուղղակի կերպով առաջնորդին, հարուստներուն և մինչև իսկ Սանասարեան վարժարանի տեսչութեան: Արքեպիս, այդ օրը Արնոյ հասարակութիւնը մտացած էր իրեն յատուկ սարսփելի հետաքրքրութիւնը ամեն մի նորեկի վերաբերմամբ: Իւրաքանչիւր հայ գլուխը կախած, իր գործին էր, իսկ գարբիներին Ըաքիրի գալուստը այնպիսի դժ, աշխոյժ ու կենդանութիւն էր պատճառած, որ Ըաքիրի ժուռեցած ատեն մուրձերի ձայնը ամբողջ փողոցը կը դղրեցնէր: Միւս կողմէն պէտք էր տեսնել, թէ ինչպէս Միւշի Ըաքիրը ամենախոնարհ բարեւներ կուղղէր իրենց խանութների առաջը կայնած հայ խանութպաններուն:

Ըաքիրը մտաւ Արին և սպասեց... մինչև այսօր էլ կսպասէ և դեռ երկար պիտի սպասէ, որ կաթնեցիք դիմեն՝ իրեն իրենց վիճակը բարեկարգելու: Այդ մի դիմում չէ եղած մինչև այժմ, ոչ մի հայ դեռ չէ գանդատած իր գաւը վիճակի վրայ, չնայելով, որ ինքն արդէն կոչ է քննել ամենուրեք և պատրաստականութիւն յայտնել արդարութիւնը պաշտպանելու:

Ըաքիրի սյրած սիրտը սփոփեց միայն վաճառական մը, որը իօլերայի ժամանակ դեղեր էր հայթայթած Մըշոյ կառավարութեան և ստակը դեռ չէր ստացած: Նըրա դիմումով Ըաքիրը իսկոյն հեռագրեց, որ անմիջապէս վճարուի վաճառականի պարտքը:

Անգործ մնացած Ըաքիրը, տեսնելով, որ բնաւ յաջողութիւն չունեցաւ իւր ասպետական դերի մէջ, դէն ձգեց իր վրայ առած պարզութեան, ուղղաժողով

թեան դիմակը և հագաւ նորէն արեւելեան խորամանկ դիպլոմատի քրքրած հագուստը: Յոյս դնելով հայերու անսփառութեան ու շահասիրութեան վրայ, նա սկսեց հրաւիրել գրանց մեծ մեծ ուժիկներով այլ և այլ պաշտօններ ստանձնելու: Արքեպի խելքն այս անգամ ալ չօգնեց, ոչ մի հայ չհրապուրեց այդ փառաւոր պաշտօններով և եթէ կային անհատներ, որոնք ի բոլոր սրտէ կը լինէին Ըաքիրի ուղերթը առաջարկած պաշտօններու համար, ասոնք ալ աչքի առաջ ունէին յեղափոխականի սարսփեցուցիչ պատկերը: Ըաքիրը կը զայրանայ, կը կատաղի, կը փրփրայ, բայց ի՛նչ օգուտ: Այդ դեռ ոչինչ: Ըաքիրի կատաղութեան չափ ու սահման չկար, երբ տեսաւ իւր քայլի ներդրութիւնը: արդէն պաշտօն ունեցողները սկսան հրաժարական տալ, Բալարեան Արապետի նման:

Այսպէս, ուրեմն, այս անգամ Տրապուզուրի և Արնոյ հայ ժողովուրդը այնքան յիմար դանւեցաւ, որ հրաժարեց սուլթանի հրամանով եկած «բարեկարգիչ» Ըաքիրի առաջարկած բոլոր բարիքներից, ոչ մի դիմում չըրաւ անոր, ոչ մի նշանակութիւն չուեց, մինչև իսկ հակառակ ցոյցեր քրաւ անոր դէմ, այն Ըաքիրի դէմ, որը անչափ կը սիրէ հայերը, որը լաւ լաւ պաշտօններ կառաջարկէ անոնց և իւր բոլոր ծառայութեան իրաւամբ կը բնայ կոչել Ըաքիրը, ձեռները լուալ հեռանալ և յանձնել նրան... քրդերի ու սովալուկ պաշտօններու «դատաստանին»:

Ըաքիրը շուտով կը մեկնի գաւառները: Յոյս ունինք, որ գաւառացի հայ ժողովուրդն ևս հետևի Արնոյ և Տրապուզուրի օրինակին: Այդ նպատակաւ արդէն Դաշնակցութեան Արնոյ կեդրոնական կոմիտէն ազդարարութիւններ է ցրել գաւառները, որոնցով կը հրաւիրէ հայ ժողովրդեան՝ ոչ մի դիմում չընել Ըաքիրին և չհամարձակի ընդունել անոր որ և է առաջարկութիւն ներք:

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Վ Ա Ն Ի Ց

I

Տաճկահայաստանը ընդհանուր տագնապի մէջ է... Ամփոփենք աչքերնուս առջև հարստահարութեանց նկարագիրը՝ և կը տեսնենք ամեն տեղ թշուառութիւնը իւր ծայրայեղութեան հասած: Սուլթանի կառավարութեան գործ դրած սոսկալի միջոցները՝ հայ ժողովուրդը իսպառ բնաջինջ պիտի անեն կարճ ժամանակէն: Տեստեսական տագնապը անաստիճան ծանրացած է ինքզ ժողովրդի վրայ, որ այլ ևս սկսած է ահապիս թուով զոհեր տանել: Ի՛նչ անէ նա, երբ ամիսներով ցորենի երես չի կրնար տեսնել՝ նա կը դիմանայ, որչափ շունչ կայ իր մէջը, ցորենի, տարեկանի, գարիի, կորեկի տեղ դո՛հ կը լինի կորնկանի (խոտի մէկ տեսակ) հացով, ու երբ այդ ալ չի գտնար՝ անօթի կը մնայ և վերջա-

պէս զօրկած իր տաւար ոչխարէն, իր ամեն գոյքերէն՝ կընտրէ իրեն համար կորուստի միջոցներէն մէկը, — կամ հաւատափոխ կը դառնայ, կամ սուսնով տեղը կը բռնէ գաղթականութեան անդարձ ճանապարհը:

Անխիղճ սուլթանի կառավարութիւն կը ձգտի դրամի նմոյշ չթողնել ժողովուրդի մէջը: Այն տեղերը, ուր սուրբերը գանձուած են՝ սկսած է հաւաքել եկող տարիներուն ալ: Այս բանը կատարուած է Ղասպուրահանի հարաւակողմի գաւառները: Այդ լեւնային երկիրը, որ չի կրնար իրեն բաւականաչափ հաց արտադրել՝ ժողովուրդը կը պարտաւորւի դնել ամեն տարի, բայց այս սոսկալի հարստահարութեանց վերջին մնացորդը ինչ միջոցի դիմէ, ինչո՞վ ձարէ հացը:

Նա իր յոյսը դրած իր փրկութեան վրայ՝ կը տանի ամեն տառապանք: Նորա համար այլևս նշանակութիւն չունեն սուլթանի կամ ուրիշներու ողորմութիւնները: Նա ալ չի խնդրիր ու չի մուրար, ինչպէս արած է մինչև հիմա, այլ իբրև մարդ կը պահանջէ իւր իրաւունքը և պատրաստ է արիւնը թափել անոր համար: Ժողովուրդը պատրաստուած է այլ ևս. ձեռք տանք, ուրիշն, չինայեք մեր օգնութիւնը և փութացնէք նորա փրկութեան ժամը:

Բայց ահա բարենորոգումն սկսած է. հարստահարութիւններ կրկնապատկւած են, որ չանցներ, որ չլուին կողոպուտի, թալանի, մարդասպանութեան, առևանգութեան, անխիղճ հարկահանութեան աղիողորմ մրմունջներ:

II

Քայլ մը յեղափոխութեան մէջ:

Հայ ժողովուրդի ներկայ տագնապալի վիճակին մէջ կը գտնուին տակաւին զլուխներ, որոնք կը ձգտին իրենց յիմար համոզումները տարածել ժողովուրդի մէջը:

Ժողովուրդը արդէն կորուստի մատնուած, թէ ի՞նչ կը քաշէ խայտառակ սուլթանի կառավարութեան ձեռք, այդ կը տեսնենք ամեն օր փախչող արաբ, սահայն մեր անամօթ տղուկները կը յանդգնին խոհեմութիւն քարոզել, ժողովուրդը զգուշացնել՝ որ սիրով տանեն ամեն տառապանք, բանտերու մէջ մաշին, իրենց ամեն ինչքերէն զօրկին ու մերկ ու անօթի դռնէ դուռ մուրան... և այդ բոլորը տանեն սիրով և համբերութեամբ:

Ո՞վ տեսած է պահպանողական-յեղափոխականներ, մենք այդ էլ ունինք: Գոնէ այդ սուրբ անունը թող իրենց վրայ չառնին և արատ չդառնան յեղափոխական սուրբ գործին: Իսկապէս ցաւ է տեսնել ժողովուրդի մէկ մասի, թէև աննշան, այդ վիճակին ենթարկուած լինելը, որուն պարտական են քանի մը անխիղճ, հացկատակ իբր ղեկավար-առաջնորդողներ...


Խեղճ ուամիկը, որ դարբերով զգած է իրեն տանջող քիւրդէն ու թուրքէն՝ երբ առաջին անգամ կը լսէ «հաւասարութիւն, համայնականութիւն» սուրբ բառերը, կը խրտչէ ու այդ բանը կը դառնայ պահպանողականներու համար մեծ զէնք մը: — «Ի՞նչպէս հաւասար իրաւունք տալ ասորիին, եզդիին, քիւրդին և այլն.

կամ ինչու աշխատել յեղափոխութեան գաղափարը ուրածել այդ սուրբ յեղափոխութեան մէջ ալ, որ մեզ հետ հաւասար իրաւունք ունենան»: Այսպէս կը քարոզեն այդ խաւարի առաքեալները, որ, կարծես, միակ ձգտում ունին նոր նոր բանասկաններ դառնալու, խեղճ ժողովուրդի գլխին ապագայի մէջը:

Իսկայի հարկէ, չեն կարող միշտ գոյութիւն ունենալ այդ պոքաբարոյճները: Սուրբ գաղափարները միշտ յաղթանակած են և կը յաղթանակեն: Արջափ հարաւորութիւն կայ իրենց շուտանցները թափեցին միամիտ ժողովուրդի գլխին, ու հիմա սկսած են ակարանալ պլլաւ: Իսկական սեռի և գիւղական ժողովուրդի գէտ հանած իրենց ամեն սրդեղքները, հալածանքները զուր անցան և վերջապէս յարգելիան իրենց անող ունենալ յեղափոխութեան մէջ և շանչափիլ, իբրև յեղափոխական մարմին, պաշտպանելով իրենց իրաւունքը հաւասարապէս: Այսպէս պիտի յաղթանակէ ամեն փետ գաղափար. թող հակառակին, որչափ և կարգին այդ խրդճուկները:

Սուլթանի կառավարութեան գաբաւոր ազդեցութեան տակ հայ ժողովուրդի այդ մէկ մասը, կարծես, վարակուած լինի տիրող խայտառակ բարքերէն, որին մեծապէս կը նպաստեն կարգ մը իբր ղեկավարող մարմիններ, որ երբեմն բոլոր եռանդով կաշկեցէին ժողովուրդական սուրբ գործին, իսկ այժմ կաշխատեն մեղքները նայն սուրբ գործը. այդ է իսկական ցաւը:

Բարոյապէս ալ մեռած, սարուկ գարձած է մեր երկրի ժողովուրդը: Մեզ հարկաւոր է ընդհանուր յեղաշօթում: Ա՛հ, երբ պիտի հասնինք այդ օրին, ե՞րբ պիտի տեսնինք վերջուած մէջտեղէն սուլթանական անարգ բանասկանութիւնը և նորա տեղը բարձրացած ժողովրդական-համայնաբարոյիս ազատ ղարբութիւնը: Մենք ունինք ապագայի համար այդ չափ հաւասար:



Ն Ա Մ Ո Ւ Կ Կ Ե Ս Ա Ր Ի Ա Յ Ո Ւ

Այս կողմերը հարկահաւաքութիւնը այն աստիճան խիստ է, որ մէկ երկու տարւան հարկը մի անգամէն կը պահանջեն և տմենայն իստութեամբ մինչև յետին պիտոյքը ծախելով, պարտականները յետին չքաւորութեան մատնելով կը գանձեն: Առևտուրը գաղարած է շահ չկայ. Անտարիզ շահանները միւթեղէյիներով և ոստիկան զինուորներով լեցուն են, հարկը վճարողը վճարեց, չը վճարողը անարգանք, ծեծ և լլկանքէ յետոյ կը բանտարկուի. ահա այս կերպով հարկաւոր մարդիկ շարունակաբար կը բանտարկուին ու կեղան:

Թալասի մէջ աւելի ծանր կերպով կը տիրէ հարկահանութիւնը. հարկը չաւողին տունը կը պարպեն, ոստիկանք և միւնիսթիկի ձեռք ծախել կուտան ամեն տեսակ կահ կարասիք, ուտելիք և այլն: Պարտականին հաշիւը գոցելէ յետոյ մնացորդը քսակին կը դնեն,

ինչ որ միշտ պատիւ կը բերէ սուլթանի կառավարութեան: Բոլոր երկրի մէջ Տիմա չքաւորութիւն, անգործութիւն կը տիրէ: Ամբողջ սնանկութիւնը խեղճ ժողովուրդը պաշարած է ալ, բան մը չունին տալիք և ծախելիք: Յաւալի է տեսնել շատ մը ընտանեաց սըրտաձմիկ տեսարանը, որոնք թաշկինակ ի ձեռին կուլան, ծախող կահ կարասիաց դուրը պաշտպան չունին՝ չի կայ քովերնին ոչ էրիկ, ոչ զաւակ, որոնք վատարանդի են արդէն: Աւելի ցաւալին այն է, որ ոստիկանապետ պէյը, ոստիկան զինւորները և միւլթիվէիները քանի մը հայ վասակներու հետ նախ կուգան հայու դուռը՝ կառաջարկեն տալ երկու տարւան տուրքը: Եթէ ստակ չի կայ կամ վաղը ըսելու ըլլայ, ոստիկանապետ պէյը անմիջապէս կը հրամայէ, որ տունը կողպտեն և ոստիկանները՝ հաւատք, կրօնք հայհոյելով կը մտնեն տունէն ներս: ալ հոս երեւակայեցէք՝ բռնաբարումը, հարստահարութիւնը, թալանուծը, կողոպտումը, ընտանեաց մէջ լաց ու կոծն և իրարանցումը, որ անկարագրելի է: Ահա տուրքի պատճառաւ այս տեսակ վայրենութիւններ կը լլան շնորհիւ յվեհափառ սուլթանին:՝

Կեսարիոյ հիմիկան կառավարիչը, նոր եկած ժամանակ, Թալասի հայոց երեւելիներէն մէկուն կողմանէ հրաւիրեցաւ: Կառավարիչը 15 ձիաւորով եկաւ, իջաւ մարդուն տունը, ուր կը պատին կառավարչին, գաւնուկներ մորթեցան և ուրիշ պատրաստութիւններ տեսնեցան: Քաղաքակիրթ կառավարչին կէս օրն անցած պահուն, առանց պատրաստեալ ընթրիքը պատելու, մեկնել կուզէ և կելլէ ու ամառիորդ թախանձանաց դէմ՝ յինձի համար պատրաստած դառնուկը զըրկեցէք ետեւնու. ես իմ տունս կուտեմ, ձեր և ոչ մէկուն ներկայութիւնը պէտք է՝, կոշտ պատասխանը տալ չամէնար և գառնուկը հետը առնելով, կը մեկնի Կեսարիա, որ Թալասէն մէկ ժամ է:

Ասկից վեց ամիս առաջ, մի քանի հայ մեռուցած են Կեսարիայից մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ տեղեր, որոնց անունն իսկ չյիշեցաւ. այս մասին բողոքներ եղան կառավարչին, բայց իզոյր բողոքներին՝ յիտրուեցէք, շուներ, միթէ ըրածնիդ չը բաւեց՝ պատասխանէ զատ ուրիշ արձագանք չունեցանք:

Ամիս ու կէս առաջ Իւզուպէկ օղլու աղա Կարապետ անուն վասակի մասնութեամբ, Թալասէն Կեսարիա տարին Կալֆայեան Մատթէոս անուն երեսուն երկու տարեկան հայ մը, իբրև թէ քաղաքական խնդիրներու վերաբերեալ խօսք մը խօսած ըլլալու անքաւելի յանցանօք, կը բանտարկի: Խեղճ երիտասարդին երկրորդ անգամն է այս ձերբակալութիւնը, որ այժմ կը հեծէ մութ ու խոնաւ բանտի մէջ, որ և է յանցանք չունենալով:

Հինգ օր առաջ կեսարացի հաճի Տիգրան և Միհրան հաճի Իւսուֆեաններն ու հաճի Յակոբ Ադաղ՝ Մատենի կողմերը կերթան՝ բուրթ առնելու համար: Ճամբուն դէմերին եկան կառավարութեան կողմէ կարգած չէրքեզի հագուստով տասներկու ձիաւոր և իրենց մարթիները դարձնելով, կը հրամայեն՝ յանհա-

ւասնէր, անձնատուր եղէք՝, նոքա կը դիմագրեն մինչև վերջին շունչ, բայց ի զուր, կապարի հարածներ ընդհատելով դիմագրութիւնը՝ երէքն ալ դեռնել կը գլորին, որոնցմէ հաճի Յակոբը և Տիգրանը կը մեռնին, Միհրանը յուսահատ վերաւոր վիճակի մէջ, Մատեն կը տարուի: Կառավարութեան պաշտօնեայ աւազակները վաճառականներուն ունեցածը կողոպտելով, կանցնին կերթան: Հիմայ ոչ հարցնող, ոչ փնտրող կայ, վասն զի կառավարութիւնը այս տեսակ բողոքներ իբրև զրպարտութիւն՝ բողոքողներուն անմիջապէս կը բանտարկի: յվեհափառ սուլթանի՝ շնորհիւ տիրող յարգարասիութեան՝ չքնաղ տիպարներն են ասոնք:

Թալասի և երկու ժամ հեռաւորութիւն ունեցող և Կարապետի վանքին միջև երկու երիտասարդ հայ մեռուցին, որոնց ով ըլլանին լաւ չկրցանք հասկնալ, միայն կըսի՝ թէ երեք ժաման մտակայ դիւզացիներ են: Հիմայ ընդհանուր վախ և սարսափ կը տիրէ թէ Աստրիայ և թէ շրջակաները. ո՞ր և է վաճառական չի կրնար դուրս ելլալ: Քաղքի մէջ ալ թուրք տարրը կատղած է հայու դէմ, կառավարութիւնը յորդոր կարգալով կը դրդէ սամիկ թուրք ժողովուրդը և կըսուի՝ թէ զաղտնապէս փամիուշաներ կը տրւին: Ամեն վայրկեան տաճիկների յանկարծակի յարձակման վախը կը տիրէ: Ժողովուրդը ահ ու գողի մէջ է:

Կեսարիոյ վիճակին առաջնորդ Տրդատ վարդապետ Պալեան իւր փառամտութեամբ, հպարտութենէ և մատնութենէ ետ չի կենար. կասկած կամ տարակոյս ունեցածը անմիջապէս կը մատնէ և անցեալ տարի Եդդատ ցուցուցած քաղաքործութեանց յաւելածները կը տեղէ:

Կեսարիա, մէկ խօքով, այժմ հարստահարութեան, զրկանաց, մատնութեանց, բանտարկութեանց, մարդասպանութեանց ասպարէզ մը է: Այս է մեր երկրի անգործական վիճակը՝ շնորհիւ բռնակալ սուլթանականութեան:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ա. Խ. Ա. Թ. (Խ. Ա. Թ.) Գ. Ա. Ի. Ա. Ռ. Ի

Այլաթ Բիթլիսի գաւառ է բաղկացած 30 գիւղերից, որոնց մի մասում ապրում են հայեր, միւսում քրդեր, միւնայեալները քրդախառն են: Ամենախոք գիւղն ունի 20, իսկ ամենամեծը 200 տուն բնակիչ: Գաւառի մէջն է Նազուկ՝ կոչւած լճակը, իսկ գաւառի կից՝ Վանայ (Բիթլիսեայ) լիճը, այդ երկու լճերից ստացւում են անաղին քանակութեամբ մեծ եւ փոքր պատուական ձկնէր, որ կառալով են արեւում բաղաւաղէս մուսուլմաններին եւ ոչ երբէք քրիստոնեայի, մանաւանդ հային, ուստի մենապաճառները ծախում են այդ ձկները հայերին թանկ գնելով: Գաւառի մովսէլեայ գիւղերը լաւ այգիներ եւ պարտէզներ կրնան արտադրել, բայց դաւալի է բոլը, որ ժողովուրդը՝ ծանր սուրբերի, թալանիչ թիւրքերի եւ հարստահարող զօրքերի

ճնշումներից ազատելու համար, ստիպւած է թողնել իւր այդքները, պարտեզները եւ պանդխտութեան ցուպը ձեռին դադարեցնել Պոլիս, Եգիպտոս, Թուսաստան եւ նոյն իսկ Ամերիկա, սուրբ գարձնելով իր հայրենիքը... Թէ ո՞վ եւ ի՞նչ է քերթը հայերիս համար մեր գաւառում, թերեւս մի փնջրիկ գաղտնիք տայ քերթը ճանկոյի ընտանիքի հետեւեալ պատմութիւնը:

Ճանկո մի նոնեացի քերթ էր, որ կը բնակէր Բիթլիսէն մի օրայ ճանապարհ հեռու գիւղ մը: Ճանկո լինելով աղքատ, իր ընտանիքով եկաւ կիւղարտութեւ եւ սկսեց հայոց արտերու մէջ մշակութիւն ընել, ծխախոտ, ձմերուկ, կաղամբ եւ այլ բանջարեղէն բուսցնել եւ անոնցմով պահել իր գերդաստանը, մինչեւ որ ճանկոյի որդի Աւգուլ մեծցաւ: Աւգուլ լաւ ճանկո լինելով հայոց գիւղերու վիճակին եւ մարդկանց բնաւորութեան, սկսեց զբաղուել գողութիւններով, սպանեց Թուսի գիւղի աէս ինչիկը եւ սարսափ ձգեց Ախլաթի գաւառի բոլոր հայ գիւղերու վրայ: Աւգուլը զառու, մակամանեց Աւգուլ աղաւ Հայերը Աւգուլ աղայի գողութիւններից ազատելու համար միաբանեցան, գնացին Մուշ միւթէտէրիֆի մօտ եւ Աւգուլ աղին բրին գաւառապետ, գայմաղամ, այդպիսով դայըրդրին պահպանուց ոչ խարների վրայ: Երկու տարի նա մնաց գայմաղամ, որովհետեւ այն ատեն դայմաղամները սկսեցին ուղղակի Պուսէն նշանակել, եւ այդ երկու տարւայ ընթացքում նա կատարեալ տէր էր ամբողջ գաւառի հայերի կայքին, հարստութեան, նոյն իսկ ընտանիքին: Ինչքան հարստութիւն, ինչքան ձիեր, կովեր, միւլեր, իրրեւ քախչիչ, նա չիւրաջրեց: Էլ ո՞ր ընտանիքի, ո՞ր աղջկայ պատիւը դո՞ւ չգնաց տուիտա քերթի անարդ կրքերին:

Աւգուլը զրկուց իր պայանից, գայմաղամութիւնից, բայց ի՞նչ գոյթ. նրա ընտանիքը արգէն ունի ձեռն սուր բանեցնող 25 անդամներ, որոնք Ախլաթի կատարեալ տէր են եւ կը թախեն, ինչ կուզեն, կանեն, կպանեն, ուժ կը յանկանան, ա՛ն ու դողի մէջ պահելով ամբողջ գաւառը:

Արդու աղայի, ճիշտն ասած, ճանկոյի բազմանդամ ընտանիքը բացառապէս թալանուծներով, սպանութիւններով չէ զբաղուում նա պարսալում է եւ առեւտրով, արգիւններով թեւակր, որ ոչնչով պակաս չէ քաղաքակաւաղակութիւնից: Բանք ա՛ն թէ ինչու՞ն է Սյր ընտանիքը տարէնը քանի մը անգամ ծխախոտ կը բերէ գաւառիս մէջ, կը ծախէ ծածկաբար, որովհետեւ կառավարութեան կողմից արգելւած է ծխախոտ ծախելը, ուստի շատ անգամ թէ՛ ծխի խնամալով, աղքատ գիւղացիք կենթարկէ մեծ սուղանքի եւ կաշառք տալու, յաճախ նաեւ բանտարկութեան: Բայց այդ չէ զաւր: Ճանկոները իրանց բերած ծրխախոտը միայն ծխողներուն չեն տալ, այլ իւրաքանչիւր տան բաժին մը կը զրկին իրենց որդուժով, թէ ծխող լինին եւ թէ ո՛չ: Միեւնոյն ժամանակ իրանք նշանակելով ուղարկած ծխախոտի գինը, որի մասին հեշտ է գաղտնիք կազմել հետեւեալ հաշիւը:

Ծխախոտի օխան կինը դուռուչ արժէ: Ճանկոները մէկ օխան կը ծախեն երկու կոտ ցորենով: Իսկ կոտ ցորենը արժէ 15 դուռուչ, ասել է՝ կինը դուռուչ արժէք ունեցող ծրխախոտը կուտան 30 դուռուչի: Հիմա կիննա՞ն, ընթերցող, թէ որ տեսակ աւաղակութիւն, թալանում է այս Աւգուլացիքը դորս վրայ եւ այն, որ ճանկոները նոյն եղանակով առեւտուր են անում, բացի ծխախոտից եւ այլ կարգի կենսական մթերքներով եւ կը պարգէք: Թէ ի՞նչ դժոխային պատկեր է ներկայացնում հայերիս կեանքը Սխլաթ գաւառում, ինչպէս եւ ամենուրեք, Յաճախայտատա նում: Եւ այդպէս, թալանել, կողոպտել հայ գիւղերը լաւ ցարձակ կամ անուղղակի ճանապարհներով, առեւտրի զիմակի աակ, — ա՛ն քերթը ճանկոյի, ինչպէս եւ բոլոր քերթերի, գողութեան նպատակը, սպրտաստի միջոցը, եղանակը: Ճանկոյի ընտանիքը իր այդ հարստահարութիւնների, թալանուծների վրայ նայում է ոչ թէ որպէս անարդարու-

թեան, այլ որպէս իրաւունքի վրայ, ընդունելով իրան, իրան երկան, պաշտպան, իսկ Սխլաթ գաւառի հայերին, որպէս իր հպատակներ, ստրուկներ Սյր իսկ պատճառով նա երբեմն կոխ է մղում այն քերթերի հետ, որոնք կը կամենային թալանել այն գիւղերը, որոնց թալանելու իրաւունքը վերապահւած է միայն իրան ճանկոյի ընտանիքին: Համանման կռիւների ժամանակ տուժողը, վնասողը դարձեալ մեռւմ է զլիաւորապէս հայը, հայի գիւղը: Ա՛նա շատերից մի թարմ օրինակ: Ճանկոներից չորս հոգի՝ կամենալով ընդարձակել իրենց կամայական ինքնախիտանութեան սահմանը, եկան Մ. գիւղը եւ նստոտութիւն (գիւղի պահպան) պահանջեցին: չխուճեցի Հատան-խանը երկու մարդով եկաւ նոյն գիւղը՝ նոյն պաշտօնը ուզելու: Նոյն օրը եկան փորձուզգի քրդերը եւ նոյն գործը պահանջեցին: Աղքատ գիւղացիք արգէն սովալուկ վիճակի մէջ էին, հաց չունէին, որ իրենք ուտէին, ուստի ոչ ոք չը բռնեցին, որպէս զի միւս կողմից եւ ոչ մէկին վերաւորած չլինին եւ չթշտանացնին իրենց հետ: Բայց իղուր Երեք տարբեր տեղերէ եկող քրդերը սպառնալիք ընելով, մեկնեցան Մ. գիւղէն եւ ինչպէս որ սպանալիք ըրին վնաս տալու գիւղացիք, այնպէս էլ կատարեցին: Ճանկոները եկան՝ գիւղի դուռէն 50 ոչխար հանելով, տարին: Հատան-խան կինը մարդով Բիթլիսի ճանապարհի վրայ, իրեւ աւաղակներ սպանեց, մինչեւ որ Մ. գիւղացիք Բիթլիս դադարի եւ վերադառնալիս, երբ կ. Պոլսէն իրենց պանդխտներէն ստակ եկած էր՝ կը բերէին թէ այդ ստակը, թէ երկու բն ու ըրիչ ապրանք եւ թէ երեք մարդոց հանդերձներ կողոպտելով, անհետացան թալանելով գիւղացոց 30 ոսկի չափ փորձուզգիք փորձեցին զաշտէն եղներ յափշտակելու եւ յաջողեցրին միայն երեքը տանել, մնացածները թողնել փախչելով: Սակայն այս երեք խուճեցող իրենց չարքը գործելէն յետոյ հուճքի ժամանակը նորէն գատ-գատ եկան գիւղը եւ իրենց համար պէտք եղած ցորենը, գարին տաւան, խոտանալով այլ եւս չվնասել գիւղին, որ, հարկաւ, հաւատարմ ընան չէ եւ որին չեն հաւատում ոչ իրանք թալանողները եւ ոչ էլ թալանուող խեղճ, աղքատ հայ գիւղացիք: Բիւրդերից պակաս չեն հարստահարում մեզ տեղութեան զօրքերը:

Հարկահաւաք զապթիաները միշտ անսպասկան են գիւղերէն: սորանց թիւը երեքէն ութի կը հասնի եւ շատ անգամ 10 օրից մինչեւ 1 ամիս կը կենան գիւղի մէջ. դոցա եւ դոցա ստրուկներին ուտելիք: ձիերու յարգը, խոտը, գարին ձրի կտրուի: Էլ ոչխար, հաւ չի մնալ, որ չտրթիւնի, իւր մեղք, ձու չմնալ, որ չհաւաքին Սյր բաւական չէ շատ թէ՛ քիչ կարող մարդկանցից կաշառք վերցնելու նպատակով, երբեմն ծխախոտ, երբեմն զէնք, երբեմն: Էլ ուստակատակ հայ փնտռելու պատրակով կը մտնեն աները եւ իրենց անգթութիւններովը սարսափ կը տարածեն անցեալները Մ. գիւղի բնակիչ վարդան-Քեամիլ անձ մը յանկարծ շրջապատւած տեսնելով տունը կատաղի ոտիկաններով, իննթցաւ, իսկ կին մը գաւակ վիժեցաւ:

Մասնաճիւղ շատ ներդրութիւններ կտայ գաւառիս Ասքար կոչւած զօրքը: Ամառս դոցանից 10 հատ զինուոր եւ մի շաւուչ եկան հոս եւ սաստիկ ծեծելով ոէս Մ., առին 30 դահեկան կաշառք, ապա «յեղափոխական մը» փնտռելու դիմակով մտան մի քանի հարուստ տներ եւ մուսամբ կաշառք վերցնելով, մասամբ կողոպտելով այդ տները, 5 սոսլավար ձրի բռնած՝ մեկնեցան Ս. հայաբնակ գիւղը, ուր սկսեցին աջ ու ձախ հայտնելով «գեաւուրներին» հայերին, կողոպտել տները., ոէս Գ. չկրցաւ տանել այդ անգթութիւնները եւ սպանաց «կառավարութեան իմաց տալ»: Զինուորները պատրակ մը ունենալու համար յայտարարեցին, որ իրենց մեծաւորի քսակն 5 ոսկի մէջն հոս ընկած է, ուստի իրենք կըրջեն տները ան գտնելու համար եւ որովհետեւ ոէսը զիմաղութիւն ցոյց կտայ, ասել է, կամ ինքն է վերցրել, կամ անհաղաղ յեղափոխական մըն է,

ուստի պէտք է պատժել եւ սկսեցին խնդիրն խիստ դազա-
 նակալործել: Ռէտը հետագայ չարիքներից եւ մեղադրանք-
 ներից ազատելու համար, շտապեց Ախլաթի կառավարու-
 թեան բազատութիւն տալու եւ պատմեց զօրքերի ան-
 դթութիւնները, բայց միթէ սուլթանի զօրքին կարելի է
 պատժել օրէնքով...:

Ասքար զօրքի մարդիկ նոր էին հեռացել գիւղից, երբ
 ներս մտան ալճաւուզցի զօրքերը. դոքա ամբողջ օրը կեր
 ու խում անելով եւ հագար ու մի մագոնած զրպարտու-
 թիւններով ու սպառնալիքներով սրանից ու նրանից կա-
 շառք վերցնելով, իրիկունը պաքչիին: (գիւղից տւած սպա-
 սաւոր) հրամայեցին «կնիկ» մը բերել իրանց քովը գիշե-
 րելու համար: Պաքչին կը յայտնէ, որ «վատ վարքի» կին
 իրենց գիւղում չկայ. զօրքերը խիստ կը ծեծեն խեղճին եւ
 կապառնան, որ եթէ այլ կին բերել չկարողանայ՝ պարտա-
 ւոր է իր կինը բերել: Սպասաւոր կարապետը ճարահատեալ
 «կին մը» գտնելու պատրաստով դուրս կուգայ գիւղից եւ
 յետ չի դառնալ. զօրքերը մինչ առաւօտ սպասելով եւ զըտ-
 նելով իրենց խարւած, կը մտնեն տները եւ յայտնելով, որ
 իրենց այդ ճանապարհորդութիւնների եւ անհանգստու-
 թիւնների պատճառը սպաստամբ հայերն են, որ Սասունի
 դէպքում կոտորեցին իրենց ընկեր զինւորներին, կը յար-
 ձակին գիւղի վրայ եւ ով ինչի կը հասնի, կը թալանին,
 կը կողոպտին. ո՞վ կարող է դիմադրել նրանց: խեղճ գիւղա-
 ցիք ահ ու դողի մէջ ծնկաչոք կը խնդրէին անդուժ զօր-
 քերից գոհ մնալ վերցրած կաշառքներով, կողոպուտներով
 եւ թողնել գիւղը... Բայց ո՞վ չգիտէ, որ նրանց հեռանա-
 լով գիւղ կը մտնեն սուլթանի այլ կարգի զօրքեր եւ կսկը-
 սեն նոյն անգթութիւնները, անգթութիւններ, որ իրենց
 գազաթնակէտին են հասել Սասունի դէպքերից յետոյ, մա-
 նաւանդ վերջին ժամանակները, երբ Եւրոպական միջա-
 մատութիւնը դրական արդիւնք չէ ցոյց տալիս...:

Տ Ե Ր Ր Օ Ր Ի Ս Տ Ա Կ Ա Ն

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(Մ Ե Ր Կ Օ Մ Ի Տ Ե Ն Ե Ր Ի Հ Ա Գ Ո Ր Դ Ա Ծ Ը)

Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն

Բ Ա Հ Ր Ի Փ Ա Շ Ա Յ Ի

Ե Ր

Զ Ի Ն Ի Ո Ր Ա Կ Ա Ն Հ Ր Ա Մ Ա Ն Ա Տ Ա Ր Փ Ա Շ Ա Յ Ի

Վ Ի Ր Ա Ի Ո Ր Ի Լ Ը

«Հոկտեմբերի 2 (ն. տ.), երեկոյեան ժամը 5-ին Տրա-
 պիզոնում դաշնակցական երկու ահաբեկիչների ձեռ-
 քով վանի կուսակալ ԲԱՀՐԻ ՓԱՇԱՅԻ վրայ սպա-

նութեան փորձ փորձեցաւ. 4-5 գնդակ արձակեցաւ:
 Բա հրի փաշան եւ տեղւոյն զինւորական հրա-
 մանատար փաշան թեթեւ կերպով վիրաւորւած են:
 Ահաբեկիչները ազատ ու ապահով են:

Հայ Ժողովուրդը ոգևորւած է, կառավարութիւնը
 կատաղած է:

* * *

Նոյն գիշեր մեր ահաբեկիչները տեղափոխելու ա-
 տեն խուճր մը թուրք խուճանի կը հանդիպի եւ լուսնի
 լուսով կը ձանձին: խուճանը կը յարձակի բռնել զա-
 նոնք. մեր հերոսները կը դառնան եւ կը գնդակեն:
 ծանօթ եւ անլանի սրիկա մը՝ Թափաճօղլիյի տղան
 կուրծքէն կը վիրաւորի մահամերձ. ուրիշ զինւոր մը
 ալ կը վիրաւորի: Մերոնք յաջողութեամբ կազատին:

Վ Ա Ն

Սեպտեմբերի 3-ին Վանի մէջ Գաշնակցական կօ-
 միտէի որոշմամբ, 4 հոգի գիշերով յարձակել են մի
 տաճիկ ՀԱՐԻԻՐԱՊԵՏԻ վրայ—պարտէզի մէջ, վրա-
 նում եղած միջոցին: Նրա յանցանքն այն է, որ եղել
 է Սասունի կոտորածի հերոսներից մէկը, առեանդել է
 մի հայ աղջիկ եւ վերցրել իր մօտ՝ իբրև հարձ...

Գնացողների նպատակն է եղել սպանել հարիւրա-
 պետին եւ ազատել հայ աղջկան: Բայց այդ բանը նը-
 րանց չի յաջողել: Հարիւրապետին միայն վիրաւորել
 են երեք գնդակով, իսկ աղջիկը այդ գիշեր բացակայ է
 եղել վրանից: Մանրամասնութիւնները շուտով:

Վասպուրականի դաշնակցական հայրուկային
 խումբը դարձեալ կուրի է բռնել քիւրդերի հետ. ըս-
 պանւել է քիւրդերին խառնւած եւ նրանց աջակցող
 միակ վատանուն հայը:

Մ Ո Ի Շ

Ահաւասիկ յեղափոխական գնդակ մը եւս հայ
 մատնիչի կուրծքին մէջ:

Մշոյ յեղափոխականներու ձեռամբ զարնեցաւ նշա-
 նաւոր մատնիչ եւ դաւաճան ՏԵՐ ԲԱՐՍԵՂ

ՔԱՀԱՆԱՆ, որ երկար ատենէ ի վեր կառավարութեան գործին մէջ արժանաւոր պաշտօնեայ մը էր: Ջարկուով տեղի ունեցաւ Մոկուկը գիւղի վերէ, գիւղէն հինգ վայրկեան հեռի, իսկ Մուշէն քսան վայրկեան դէպի այդեստան: Չորս անձինք յարձակած էին վրան, առանց պատահութիւն կորսնցունելու երեք հարուածներ գլխուն իջեցուցած էին. այդպիսով տապալեցին այդ անպիտան դաւաճան հրէշը, որ ամբողջ Մշոյ ժողովուրդը թշուառացրեր էր այս քանի տարիներու ընթացքում: Ջառնողները անյայտ եղան, իսկ գարշելու դիակը մինչև առաւօտ արիւնաթաթախ գետին մնացած էր: Իր ընկերներ առաւօտեան լուր կուտան կառավարութեան, թէ ձեր սիրելի բարեկամին սատկած. դիակը Մոկուկը գիւղէն վեր կը գտնուի. կառավարութիւն իր պաշտօնեաներով և հեծեալ զապթիաներով դէպքին վայրը կերթայ: Ստիպեալ գիւղի ուէս, իրան երեք ընկերակիցներ և գիւղէն երկու ալ ուրիշ անձինքներ տարին իրենց հետ ի Մուշ, նաև Մուշէն ալ չորս անձինքներ: Սկսան նոյնպէս անմեղ գիւղացիներ ձերբակալել և ձերբակալութիւնք տակաւին կը շարունակին:

Կ Ա Ր Ի Ն

Հոկտեմբերի 5-ին (ն. տ.) երեկոյեան ժամ 6-7-ին Կարնոյ բազմամարդ փողոցներից մէկում՝ Կանա ճամբայ կոչող ճանապարհի վրայ Հայ Յեղ. Դաշնակցութեան դաշոյնը վարձատրեց յայտնի մատնիչ փաստաբան ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՐ-ՍԱՐԳՍԵԱՆԻՆ:

Ձերբակալած և բանտարկած են անմեղ հայեր: Այս դէպքին, ցաօք սրտի կաւելացներ, զոհեց կարներցի վաճառական Սիմէօն Պետոյեան, բոլորովին անմեղ, որին թէև ազդարարեցին հեռանալ, բայց սա՛ իբրև օգնութեան դալով Տէր-Սարգսեանին, փուռում է սորա կողքին: Մանրամասնութիւնք յետոյ:

Վանի նախկին նահանգապետ Բահրի փաշայի և Տրայիզոնի զինուորական հրամանատար Ֆէրիզ փաշայի վերաւորման լուրը, որ ստացանք անցեալ ամսի 17-ին (ն. տ.), անմիջապէս տպագրելով առանձին թերթերի վրայ, ցրեցինք: Իսկ Վան, Մուշ, Կարին տեղի ունեցած տէրրորիստական գործողութիւնների մասին մեր Կովստէների հաղորդածները նոյնպէս առանձին թերթիկների վրայ տպագրելով, ցրեցինք նոյն ամսի 29-ին (ն. տ.):

ՆԵՒՐԱՍԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅՈՒՑԱԿԸ.

Հ. Յեղ. Դաշնակց. կեդր. սնդուկի մէջ ստացւեցան. Մխիթար Բագրատունի 50 օսմ. ոսկի, Արշ. 10 օսմ. ոսկի, Վեհանձն 1350 ուռբլի:

Կ. Պալսի կեդր. սնդուկի մէջ Օձ քղ. ստացւեցան. Արծիւ 40 դահեկան, Արև 32 դհ., Փոթորիկ 40 դհ., Փ. Բ. 10 դհ., Յոյս 10 դհ., Ղ. Բ. 10 դհ., Երկաթ 10 դհ., Ը. Ն 10 դհ., Մ. Կ. 28 դհ., Ս. Ա. 54 դհ., Ա. Թ. 60 դհ., Աշխատող 216 դհ., Զ. Շ. 109 դհ., Բլուր-Առիւծ 50 դհ., Հատուկ. 80 դհ., Ածոխ 30 դհ.:

Արշակաւան քղ. կեդր. սնդուկի մէջ ստացւեցան. Ուժանակ 30 դհ., Օշին 25 դհ., Արտաղ 15 դհ., Տալուրիկ 50 դհ., Ենիչերի խ. 60 ևս 55 դհ., Արշայր 60 դհ., Հրահատ 30 դհ., Սիսակ 50 դհ.:

Պիծակ խ. 60 դհ., Մամիկոնեան խ. 60 դհ., Հրահատ 10 դհ., Արտադիր խ. 50 դհ., Շաքէ խ., 200 դհ., Կրակ խ. 75 դհ., Վանական 20 դհ., Ալէկ 20 դհ., Կամք խ. 20 դհ., Ձեփիւռ 10 ու կէս դհ., Ուժանակ խ. 15 դհ.:

Նիզակ քաղաքի սնդուկի մէջ ստացւեցան. Թորոս Մանուկ 3 օսմ. ոսկի, Մարտիրոս 3 օսմ. ոսկի, Յ. Ս Շ. 20 օսմ. ոսկի, Գ. Բ. Շ. 20 օսմ. ոսկի, Կեսար. Մ. Կ. 60 մէճիտ արծաթ, 4 ոսկի գաղղ, 18 ոսկի անգղ, 5 ոսկի օսմ. թղթագրամ, Անվախ խումբ 60 դհ., Մագսուտ Կարապետ 10 օսմ. ոսկի:

Վիշապ քաղաքի կեդր. սնդուկի մէջ ստացւած են. Օձ քաղաքէն՝ Թնդանթ 32 և կէս դահեկ., Շանթ 35 դհ., Կորիճ 24 դհ., Արծիւ 40 դհ., Թրքատեաց 54 դհ., Օճառ 324 դհ., Խոյ 108 դհ., Վահէ 80 դհ., Կ. Յ. 108 դհ., Վահագն 20 դհ.:

Բ. Ռ. 200 դհ., Սև-Կարմիր 134 և 3 քառորդ դհ., Գ. Անձնէր 30 դհ., Ն. Խ. 10 դհ., Ա. Բ. 10 դհ., Ռ. Հ. 10 դհ., Մուշեղ 5 օսմ. ոսկի, Փայլակ 3 օսմ. ոսկի:

Մասիս 50 դհ., Յառաջդիմաւէր 100 դհ., Կայծ ու Բոց 30 դհ., Աէր 20 դհ., Կ. Ռ. Մ. 15 դհ.:

Արմենուհի 35 դհ., Զրկէժ 120 դհ., Հզոր 45 դհ., Ա. Բ. Գ. 10 դհ., Արարատ 50 դհ., Օլակ 20 դհ., Բաշ 40 դհ., Մանիշակ 27 ու կէս դհ., Արթուր 20 դհ., Արծիւ 40 դհ., Տ. Գ. Մ. 261 դհ., Չկնորս 27 դհ., Մամիկոնեան 10 դհ., Յ. Բ. 20 դհ.:

Թաթար-Բազարջիկի յարտեան գնդից Ն. Մ. ի միջոցով 60 ֆր.:

Շ. Ժ. ք. Ա. 10 ֆր., Թ. 15 ֆր.:

Միացեալ նահանգ. Ֆօլ-Տիվէր ք. ից Ն. Մ. ճ. 4 շէլ և 2 պէննի, Վայթիստիլ Յ. Մ. Ֆրանկեան 1 դօլ:

Դաշնակցութեան անձնօթնեղոց ինչուրում է թղթակցութեան և ներստուութեան համար դիմել:

Gaspar, poste restante, Carouge (Suisse).

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան աղատ տպարան:

ԻՐՈՇՆԻԿ



Հ.Յ.Պ. ՔԻՐՐՈՅԻ
ՉՐԱՎԱԲԱՐԱՆ
A. R. F. BUREAU
LIBRARY

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Կ Ո Չ

Վշտերու յեղևողով գնացքներ դարձեալ ճգնեցան տառապեալ հայերն մահաւան պսակի ներքև դնել. ամեն կողմ տիրած է դառնութիւն, ամեն դի հալածանք, ջարդ և կսկծալի ցաւերու մահապոյժ հոսանքներ. ողջ մնացող սգաւորներու ալէկոծ սրտեր և հայուհիներու հեծեծանքի ու հառաչանքի աղէկաուր ողբեր՝ հոգիներ աւերելով՝ կերկարին դէպի... Ո՛ր...

Տրապիզոնցի խեղճ հայերն, որ տառապանաց և զրբկանաց տակ հեծելով հանդերձ կը ճգնէին սովեալ սասունցիին բերանը բրդուճ մը հաց դնել, ցաւ ի սիրտ չկարողացան հասնել իրենց ջերմ փափագին: Ներկայացաւ իրենց 1895 Սեպտեմբեր 26 անուն կրող կարմիր օր մը ալ և անոնք յանուն ազատասիրութեան սասունցան վատ ու բարբարոս սուլթանականներու անարդ դաշոյնով:

Հիմայ դուք, ո՛վ ողջ մնացողներ, սթափուցէ՛ք, ձեր վրայէն թափեցէք սև մոխիրն, նորոգւեցէ՛ք աւելի ամուր սրտով, որպէս զի աւելի շուտով վեր դանք ազատ ապարեց:

Ձե՞ որ համոզւած էինք՝ թէ ազատութեան սէրը արիւնով միայն կը տօնւի, ուստի յառաջ, կուի՛ ու արեան մէջ փնտռենք նորէն մեր դոյութեան իրաւունքը. և թող տէք շահախնդիր դիպլոմատիան ընդմիշտ՝ որքան կամի, այնքան թող քաշքշէ մեր արդար դատը: Լինենք մենք անյողգողդ տարած մարտերնու տևողութեան մէջ և յուսանք անպատճառ յաջողել, քանի որ ահներև է՝ թէ մեր պահանջներ լիովին արդարացի են:

Ցաւ ու կրակն են ազատութեան մայրը և ընդունւած դարման՝ արիւնը:

Յառաջ, սիրով փարինք մահաւան, անով միայն պիտի կրնանք հանդէս բերել ազատութեան արշալոյսին շողջողուն ճառագայթներ:

Թիւրքիայէն դուրս քիչ թէ շատ կեանքի ապահովութիւն ունեցող ո՛վ հայեր,

Ձե՛զի կրուի, մի՛ թողուք, որ հայուն կեանքի թելն բոլորովին կտրի, ձեր եղբայրներ արեան մէջ կը լողան, ձեր քոյրեր ու մայրեր մոխիրի վրայ նստած՝ երկինք նայելով, արի՛ւն կարտաւեն ու չեն կարող իրենց սիրելիներու մարմինները գտնել ու գրկել...


Ներկայ և ապագայ յոյսեր՝ ողջ ու կիսամեռ, կուլ կերթան ծովու ու փոսերու...

Ցաւերու ամեն կերպարանքներ, սարսափ, սարսուռ ու մահ կընծայեն. ալ անպատելէ վերջ, մեռանք, կորանք, մինչև ե՞րբ քնէ պիտի երնէք. խօսելու ժամանակ չէ՛, շուտով արթնցէ՛ք, վեր ելէ՛ք, հասաւ հայուն ճգնաժամը, հասաւ. ազատութեան երկրպագու հայեր, վստեցան, հատան...

Տրապիզոն, Բաբերդ, Երզնկա, Արին ու Հայաստանի ամեն կողմեր ողբ ու կոծ, արիւն ու կրակ իրար կանցնին. դաշտեր ու գետեր կարմրեցան, ալ ի՛նչ տեսակ ցաւեր կերևակայէ՛ք, ո՛վ մարդիկ, հուր ու սուր անձրևանման կը տեղան, հայու կենաց ճրագ ահա մարել սկսաւ, հասէ՛ք, հասէ՛ք, չպէտք է արհամարհել այս բոցոտ ցաւերն ու եթէ այն, որ զլանայ դալ օգնութեան, ա՛հ, ցաւօք, ապագայիններու պիտի կտակւի անոնց մութ ու աղօտ յիշատակը յաւիտենական ամօթի թքով ու մրով զարդարել:

Օգնութի՛ն, կուենք:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ:



Ձ Ե Յ Թ Ո Ւ Ն Ի Ա Պ Ս Տ Ա Մ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ծ Ն Ր Ո Պ Ա Կ Ա Ն Թ Ե Ր Թ Ե Ր Ի Յ

(Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ն Ե Ր Կ. Պ Ո Լ Ս Ի Յ)

Նոյեմբերի 9-ին. (ն. տ.) 3800 հայեր՝ պաշարած լինելով Ձէյթունի զինւորանոցում տաճկական զօրքը, Մուստաֆա փաշան՝ տասը վաշտ զօրքի գլուխ անցած վերջինս օգնութեան է հասել: Տաճկական զօրքը կարողացել է խլել 2800 հրացան Մարտինի, 1200 ըէվօլ վէր և ահագին քանակութեամբ ռազմամթերք:

**

Նոյեմբերի 12-ին. Մինստրների խորհուրդը վճռել է նոր զինւորական միջոցների դիմել երկրի այն մասերում, որ բռնւած են 4-րդ և 5-րդ զօրաբանակով: ՊԲաբէլ՝ պատերազմանաւը Ձմիւռնայից տանում է օգնական զօրավաճառ Ձէյթունի և Մարաշի համար:

**

Նոյեմբերի 12-ին. Ձէյթունից հեռագիրը հաղորդում է, որ հայ ապստամբները յարձակել և աւերել են Չուքիւր-Հիսար ու սպանել են 35 մուսուլման:

**

Կ. Պոլսից ստացած մի այլ հեռագիր հետևեալն է հաղորդում քաջ զէյթունցիների տարած յաղթութեան մասին.

«Հայերը՝ տիրելով Թիւրք զօրաբաժնի զէկքերին և ռազմամթերքին, զօրաբաժին, որ անձնատուր էր եղել Ձէյթունում, այժմ բռնել են զօրանոցը և բոլոր այն կէտերը, որ առաջ բռնած էին Թուրք զօրքերը»:

Տ Ե Ր Ր Օ Ր Ի Ս Տ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Դ Ա Ի Ա Ճ Ա Ն Ե Ի Մ Ա Տ Ն Ի 2

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Ա Ղ Ա Տ Ե Ր Պ Օ Ղ Ո Ս Ե Ա Ն Ի

Ս Պ Ա Ն Ո Ւ Մ Ը

Վ Ա Ն

Սեպտեմբերի 28-ին, երեկոյան ժամը 6-ին (ը. եւր.) Հ. Յ. Դաշնակցական ահաբեկիչները, վանի կեդրոնա-

կան կօմիտէի որոշմամբ, սպանեցին վանայ մէջ նշանաւոր դաւաճան ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՂԱՏԵՐ ՊՕՂՈՍԵԱՆԻՆ Գեանդրէի կարակօլխանի (պահականոց) մօտ: Դաւաճանը առաջները երկու անգամ տէրրօրի կնթարկւած է, սակայն անաջող: Ահաբեկիչները սրի հարւածներու տակ անշնչացած Թողին դաւաճանին: Կատարեալ յաջողութիւն. ընդհանուր սարսափ, խուզարկութիւն և ձերբակալութիւններ: Ահաբեկիչները ազատ են:

**

Յովհաննէս աղան՝ որը ստացաւ իր արժանաւոր պատիժը—մի սոսկալի չարիք էր վասպուրականի համար: Բահրիի կուսակալութեան օրերում՝ նա ոչտիկանութեան դաղտնի լրտեսը, տեղեկատուն էր. Թշնամի երիտասարդութեան ձգտումներին, Թշնամի հալածւած ժողովրդի արդար բողոքներին՝ իր հարստութեամբ մի սոսկալի կեղեքիչ, վաշխառու էր, ծծող հայ ժողովրդի արեան վերջին կաթիլը: Անարգ դաւաճան, դու կրեցիր քո արժանաւոր պատիժը:

Մ Ա Տ Ն Ի 2 Ե Ի Դ Ա Ի Ա Ճ Ա Ն

Ս Օ Ս Ո Ւ Ն Ի

Ձ Ա Ր Կ Ո Ւ Մ Ը

Շ Ա Տ Ա Խ

Դաշնակցականները Շատախում զարկեցին Սեպտեմբերի 22-ին (հ. տ.) մատնիչ և դաւաճան ՍՕՍՈՒՆԻՆ, որը կաճիս գիւղիցն էր: Տէրրօրիստները ըէվօլվէրի 3 հարւած կն տւած, մէկը Թեխն և ոսկորը ջահջախւած է, միւսը կողին, իսկ երրորդը ուսին: Մատնիչը գեռ չէ մեռել, բայց շուտով կերթայ միւս աշխարհը: Սօսունը երէք տարի էր՝ վառում էր շատախցիներին: Դեռ մինչև այս ժամուս Սօսունի մատնութեան զոհ գնացած տասնեակ շատախցի կտրիճներ թէ վանի և թէ Շատախի բանտերում շղթաների տակ հառաչում են, մանաւանդ քաջ կաճիսցիների նամուսը ոտնակոխ էր արած այդ լիբը ազգագաւը և հասնում է նրա գլխին յեղափոխականի, շատախցի կտրճի դատաստանը՝ գնդակը:

Ձերբակալւած են 2 քիւրդ և 1 հայ Տէրրօրիստները ազատ են:

Ն Ե Ր Կ Ա Յ Ի Ո Պ Ե Ն

Գետի պէս հոսող հայի արիւնը Հայկական խնդրի կերպարանքը փոխեց: Նա՝ Հայկական խնդիրը այսօր ստացել է բոլորովին մի նոր գոյն, նա մտել է մի այլ և հետաքրքիր ու նշանաւոր շրջան:

Հայկական խնդիրը դիպլոմատիական տեսակէտից մինչև այսօր իւր բարձրութեան վրայ չէր դանդաղում. նա քննուում էր կիսաբերան, ահաճութեամբ ու բոլորովին ոչ տրամադիր դէպի հայ ժողովուրդը: Ստիպամբ ասպարէզ էին իջել երկու գլխաւոր հակառակորդներ— Անգլիան և Ռուսիան, իսկ Ֆրանսիայի ներկայութեան գլխաւոր պատճառը — այսօրայ իւր բարեկամին՝ Ռուսիային աջակցելու, թիկունք լինելու համար էր նրա հակառակորդի դիմաց, որը միաժամանակ հակառակորդ է և իրեն՝ գլխաւորապէս նեղոսի ջրերում:

Դիպլոմատիական այս կոմբինացիան, համախուժւած երբէք չէր կարող լինել յօգուտ Հայկական դատին, հայ ժողովուրդը ու յեղափոխականները պէտք էր միշտ ու դրականապէս բացասօրէն վերաբերուէին այս միջամտութեան, ինչ որ էլ արին,— որովհետև ներկայ համախուժման մէջ տիրող քաղաքականութիւնը լինելու էր ներկայ ուսականը, իսկ ներկայ Ռուսիան յայտնի է իւր դարեւոր քաղաքականութեան մէջ, որին միշտ նա հաւատարիմ է մնացել և որից շեղելու երբէք և ոչ մի բանով էլ տրամադիր չէ. նա երբէք չէր ցանկանալ Տաճկահայաստանի ոչ միայն անկախութիւնը, այլ և կիսանկախութիւնը, նա չէր ցանկանալ, որ չարիքը վերջանայ, որպէս զի յաջող հանգամանքներում առիթ ունենայ Հայկական շարժումը, Տաճկահայաստանի խռովութիւնները ծառայեցնել իւր օգտին՝ միջամտելով և յայտնու ջրիստոնէութեան՝ իրեն առնէր Օսմանեան պետութեան այդ մասը: Եւ որքան էլ անգլիական դիպլոմատիան աշխատէր, որքան էլ նա գործ դնէր իւր յայտնի ճարպիկութիւնը, անհնարին էր նրան յաղթութիւնը տանել, քանի որ նա իւր դիմացը ունէր ֆրանկո-ուսական միութիւնը ու սուլթանի կառավարութիւնը, որոնք համերաշխ էին: Անգլիային մընում էր դուրս գալ այս դիպլոմատիական դժուար կացութիւնից գոն է փոքր ի շատէ պատուաւոր կերպով, որովհետև պատերազմել առ այժմ անհնարին է, և նա օգուտը չէր ստանալ յաջող պայմանից՝ խռովութիւնից, զիջումներ անելով՝ խնդիրը երբէ պետութիւնների մէջ վերջացած համարեց, բայց դիպլոմատիական տես-

սակէտից նա՝ խնդիրը բաց մնաց:

Մենք սրանով երբէք չենք ուզում ասել, որ Անգլիան աշխատում էր յօգուտ հայերի, որ Հայկական խնդրում նա անկեղծ ու անշահասէր էր. քան լիցի Մենք արդէն քանիցս ասել ենք, այստեղ էլ կը կըրկենք— ոչ մի պետութիւն չի միջամտիլ մի որ և է քաղաքական խնդրում, եթէ նա շահ չունենայ. նրանց պետութիւնների դրող ոյժը ու ղեկավարող սկզբունքը պետական շահն է: Անգլիայի մասին մենք խօսում ենք համեմատական աստիճանով, ի նկատի ունենալով և նրա ներկայ քաղաքական կազմակերպութիւնը, և այն էլ ոչ թէ պետական շահի տեսակէտից առնելով, այլ քաղաքական-հասարակական տեսակէտից: Ինչ կասկած, որ Անգլիային նոյնպէս ցանկալի է տիրել Հայաստանին, բայց որովհետև այդ շատ դժուար է և աւելի քան Ռուսիայի համար, ուստի նա ջանք է անում Ռուսիայի դիմաց Հայաստանից մի պատնէշ շինել. և այս քաղաքական հակառակութիւնից մենք կարող ենք օգուտել:

Երբէ պետութիւնների միջամտութիւնը դիպլոմատիական տեսակէտից ոչ միայն յաղթութիւն չէ, այլ և մեծ յաջողութիւն էլ չէ. Հայկական հարցը երբէք վճուել չէր կարող դրանով, որովհետև այդ խնդիրը քաղաքական գոյութեան իրաւունք էր ստացել Բերլինի վեց պետութիւնների կազմած վեհաժողովում: Որքան էլ որ Հայկական խնդրում միջամտող երբէ պետութիւնների համար հարցը լուծէր, բայց դիպլոմատիական տեսակէտից նա միշտ բաց էր մնում. ձեռնպահ մնացած միւս պետութիւնները կարող էին ամեն ինչ, երբ այդ իրենց ձեռնտու է, այդ յուճուած խնդիրը՝ քաղաքական հարց շինել և նորից դիպլոմատիական ասպարէզի վրայ դնել: Բացի սրանից կայ և մի այլ ոյժ և այն էլ նշանաւոր, կշիռ ունեցող ոյժ, որի համար հարցը նոյնպէս լուծած չէր՝ ոչ թէ առ ժամանակ, այլ մինչև իսկ բոլորովին, որի համար խնդիրը անպայման կերպով մնում էր բաց—այդ ինքը դատի տէրն է, այդ հայ ժողովուրդն է: Հայկական խնդիրը չի կարող լուծուել, չի կարող մի որոշ եզրակացութեան հանգիւ ժամանակաւորապէս անգամ, և նա միշտ բաց կը մընայ, եթէ հայ ժողովուրդը դժգոհ է: Սա ցնորք չէ, սա խօսքեր չեն, այլ իրողութիւն, փաստ, որը կենդանի է մեր յիշողութեան մէջ, որին մենք ականատես ենք:

«Սուլթանական բարեկորդութիւնը» համաձայնութեամբ երբէ պետութիւնների ընդունուցին և նրանք դործադրուելով օրէնքի ոյժ պիտի ստանային, արդէն ինքը ընդհանուր կառավարիչ նշանակած սուլթանական պետական անձնաւորութիւնն էլ բուն երկրումն էր և ըս-

կսել էր իւր գործունէութիւնը, որի մի կարգադրութեան պատճէն մեր ձեռքի տակն է այժմ: Բայց հայ ժողովուրդը միացած յեղափոխականների հետ մերժեց և դժգոհութեան նշաններ ցոյց տուաւ. նա ձեռնպահ մնաց. «ընդհանուր կառավարչին», «բարենորոգումների կարապետին» ընդունելութեան ժամանակ և բաց է բաց մերժեց նրա առաջարկութիւնները: Եւ այսպիսով երկրի այդ երկու ուժերը չէզոքացրին «բարի սուլթանի բարենորոգումները»:

Տւած հարւածը զգալի եղաւ կառավարութեան, նա չկարողացաւ մարտել այդ ապստակը, նա իրեն ոչնչացած զգաց այն ոյժի առջև, որը մի քանի օր առաջ դեռ իւր ստրուկը, իւր բեռնակիր անասունն էր, որի հետ, ի բը և ս ե փ ա կ ա ն ու թ իւ ն, անպատիժ կերպով վարւում էր, ինչպէս ցանկանում էր: Սուլթանի կառավարութիւնը շատ խիստ կերպով զգաց, որ իւր հեղինակութիւնը ոչնչացած է, հետեւապէս ոչնչացած է և իւր դուրսեան իրաւունքը այդ երկրում, այդ ժողովրդի համար: Եւ մահացու կերպով վիրաւորած դազանը անդրադարձրեց հարւածը իրեն փրկելու, իրեն հոգի ու շունչ տալու. և իբրև պատիժ սկսեցաւ կոտորածը, երկար ժամանակ պատրաստած թիւրք ամբոխի ձեռքով ըմբոստ, ապստամբ ժողովրդի հայրենիքը՝ Տաճկահայաստանը՝ դարձրեց արեան դաշտ, աւերակ երկիր:

Նոր սարսափները, նախճիրները եկան վերստին հաստատելու, որ Տաճկահայաստանում տեղի ունեցող դէպքերը ոչ թէ պատահական են, ոչ թէ բացառապէս հետեւանք են կրօնական մոլեռանդ ատելութեան—որովհետև հայը զատում էին միւս քրիստոնեաներից—այլ որ նրանք ունին շատ լուրջ նշանակութիւն, որ նրանք ունին իրենց խոր արմատները: Տեղի ունեցող սարսափները իսկական, հաւատարիմ արձագանքն են տիրող պայմանների, պարզապէս «լինել-չլինելու», «գոյութեան» կռիւ է մղուում:

Իրերի այս դրութեան սուր բնաւորութիւն առնելը այլ ևս չէր կարող արհամարել, նա սպառնում էր Արևելեան խնդրի բարձրանալուն և մինչև իսկ պայթելուն, ուստի 6 պետութիւնները ստիպւած եղան միջամտել մեծազոյն չարիքից ազատելու համար:

Պրովհետև Հայկական խնդիրը կապւած է Արևելեան հարցի հետ, ուստի դիպլոմատիայի վրայ ճնշում գործ դնելու ամենազօրեղ միջոցը, յայտնի է, յեղափոխական շարժումներն են: Հայկական յեղափոխական շարժումը ներկայումս Արևելեան հարցի, այդ քաղաքական-պայլծուցիկի պատրոյկն է, իսկ յեղափոխականները այդ պայթուցիկը վառողը, նրա կրակը: Արևելեան հարցի պայթու-

մից սարսափում է քաղաքակիրթ աշխարհը և առանձնապէս նրա քաղաքական ներկայացուցիչները: Հայկական խնդրի այս կէտը իւր ամբողջ լրջութեամբ լաւ են հասկացել հայ յեղափոխականները, ուստի նրանք օգտուելով այդ դրութիւնից ժողովրդի հետ միասին, ուշադրութիւն չդարձրին զանազան խոստումների, անմտրէֆօրմների ու վիժմունքների վրայ, շարունակեցին շարժումները, յեղափոխական գործը: Նրանք համոզւած էին, որ երեք պետութիւնների միջամտութիւնից մեկ անգամ չի ծնւիլ, քանի որ շուկայի վրայ տիրող ուռւսական քաղաքականութիւնն էր, համերաշխ սուլթանական կառավարութեան հետ: Բայց մինչդեռ ըզգացնելով 6 պետութիւնների միջամտութեան անհրաժեշտութիւնը, դրանով փոխում են միանգամայն միւշև այսօր եղած դիպլոմատիական յարաբերութիւնների բնաւորութիւնը, կերպարանքը: Սրանով Հայկական խնդիրը ոչ միայն քաղաքական տեսակէտից իւր բարձրութեանն է հասնում, իւր իսկական ոյժն ու նշանակութիւնն է ստանում, այլ գլխաւորապէս, որ կառավարան այլ քաղաքական պայմաններ, դիպլոմատիական այլ կոմբինացիա և ուռւսական քաղաքական սղդեցութիւնն իւր ոյժը կը կորցնի:

Կասկած չկայ, որ Աւստրիան Ռուսաստանի հակառակորդն է Բալկանեան թերակղզում, որ սրանց մէջ նոյնպէս կայ մի ուժեղ մրցում, հակառակութիւն: Օսմանեան պետութեան մէջ ամենամեծ շահ ունեցողներն են երեք մեծ պետութիւնները՝ Անգլիան, Ռուսիան և Աւստրիան: Կասկած չկայ նոյնպէս, որ Ռուսիան աւելի ընդհարւում է Աւստրիայի ու Անգլիայի հետ, քան Աւստրիան Անգլիայի հետ և փոխադարձաբար:

Հետեւապէս Օսմանեան պետութեան վերաբերող խնդիրներում Անգլիան և Աւստրիան աւելի կը մտնան և փոխադարձ կը պաշտպանին ի միաս Ռուսիային, որոնց կը միանայ և Գերմանիան, և Իտալիան, իսկ Ռուսիան իր հետ կ'ունենայ միայն Ֆրանսիան... ներկայումս առաջնախումբ այս տեսակ կոմբինացիա, համախմբումն, Հայկական խնդիրը կարող է Հայ ժողովրդին աւելի նպաստաւոր լուծումն ստանալ այնքան, որքան կարելի է սպասել դիպլոմատիայից: Ռուսիան այս շատ լաւ է հասկացել, որ աշխատում էր շուտով վերջ դնել խրնդրին, ճնշում էր բանեցնում հայ ժողովրդի վրայ ընդունելու Շաքիր փաշային, իբրև ընդհանուր կառավարիչ դեռ աւելի առաջ, քան սուլթանական ռեֆօրմների ընդունելը, իսկ այդ խայտառակ վիժմունքից յետոյ, նա հայ ժողովրդից պահանջում էր դո՛հ լինել վիժմունքից, ընդունել և դադարել յեղափոխական շարժումներից: Բայց այդ նրան չբաշտուեց. հայ ժողովուրդը ու յնպա-

փոխականները հենց առաջի քայլում լաւ հասկացան այդ վեժմունքի արժէքը ու ներկայ դրութեան նշանակութիւնը և շարունակեցին ընդդիմագրութիւնը, և յաջողեցան իրենց դատին տալ իւր իսկական քաղաքական նշանակութիւնը: Եթէ այս համախմբումից չառաջանայ այն, ինչ որ առաջացաւ Բալկանեան թերակղզում, դոնէ, շեշտում ենք, եթէ հայ ժողովուրդը օգնելով յեղափոխականներին՝ ոյժ տայ շարունակելու կռիւը ու նրան աւելի սուր բնաւորութիւն տալու, կանաչանայ այն տեսակ պայման, որ կարելի կը լինի ասել, թէ մի յաղթութիւն տարուեց, թէ մի քայլ առաջ անցանք: Եւ պէտք է ի նկատի ունենալ, որ Բերլինի վեհաժողովին մասնակցող վեց պետութիւնները այսօր միջամտում են Հայկական խնդրում ոչ թէ խաղաղ, միայն դեսպանների միջոցով, այլ և պատերազմանաւոր դիկելով Օսմանեան պետութեան ջրերը:

Քաղաքական տեսակէտից Հայկական խնդիրը իւր ամենափափուկ և սպառնալից շրջանի մէջ է գտնուում: Հայ ժողովրդից ու հայ յեղափոխականներից է կախուած այժմեան լարուած դրութիւնից խելացի ու հմուտութեամբ օգտուելը: Խնդիրը հասցնելով այդ աստիճանին, դրանով յետ դարձնելով փառաւոր ապտակը, որ հասցրած էր սուլթանական դիպլոմատիայի կողմից, հայ ժողովրդից ու յեղափոխականներից է կախուած նրան յաջողութեամբ պսակելը: Իսկ սրա համար հարկաւոր է, անհրաժեշտ է շարունակել անընդհատ ու ուժեղ կերպով կռիւը, չկանգնելով ոչ մի երկիւղի, ոչ մի արդելքի ու խոչընդոտի առջև, մարդկային արիւնն է, որ ստիպում է դիպլոմատ մարդկանց ի նկատի ունենալ մարտիրոս, բայց և ազատութեան համար քաջութեամբ կուռղ ու նրան գնահատող ժողովրդի շահերն էլ: Եթէ այս անգամ էլ մեր խնդիրը անյաջող լուծուած ստանայ դիպլոմատիական տեսակէտից, յանցաւորը կը լինի ինքը հայ ժողովուրդը, որովհետեւ դրան հասնելու համար, անհրաժեշտ է եռանդուն գործունէութիւն, անհրաժեշտ է այսօրուայ կռիւը շարունակել աւելի կառաւոր կերպով ու նրան աւելի սուր բնաւորութիւն տալ իսկ սրա համար հայ յեղափոխականները ժողովրդի աջակցութեան կարոտութիւնն ունին: Միակ միջոցը օգտուելու ներկայ ըրպէից, կրկնում ենք, անընդհատ և ուժեղ կռիւն է, երկիրը կատարեալ անիշխանական դրութեան մէջ դնելն է: Պէտք է օգտուել այդ հանգամանքից՝ ձեռք բերելու Հայկական շարժումների համար յաջող պայմաններ և ժողովուրդը թիփեւացնելու ներկայ դժոխային դրութիւնից, աներևակայելի սարսափներից: Իսկ սրան այժմ կարելի է հասնել, որովհետեւ Արևելեան խնդրի պատրոյկը ու վառելը հայ ժո-

ղովրդի ձեռին է...

Արևելեան հարցը համարելով, իբրև զօրեղ զէնք մենք երբէք չենք կարծում, թէ այսօր կարող ենք այս հարւածով պսակել միանգամայն մեր իղձը, ոչ: Միշտ ասել ենք, դիպլոմատիայի վրայ յոյս չպիտի դնել, նա ժողովրդների ազատութեան բարեկամը չէ: Բայց ուժդին յեղափոխական շարժումները ստիպում են ներքին գիշտումն անել. իսկ եթէ նա գիշտումն է անում, այդ մեր կողմից մի քայլ առաջ գնալ է և ուրիշ ոչինչ: Դիպլոմատիան երբէք հեշտութեամբ գիշտումն չէ անում, ինչպէս էլ նորից հաստատում են վերջերս տեղի ունեցող փաստերը. նա ճարպիկ խաղերով ու մանեօվրաներով աշխատում է թող փչել դժգոհ ժողովրդի աչքին, ինչպէս էլ նա արաւ մինչև այսօր. նրա արածները ոչ թէ գիշտումն էր, այլ խաբէրայութիւն: Պէտք է խրատուել անցեալից և մեծ զգուշութեամբ վերաբերուել նրա նորագոյն շարժման, խաղերին, որոնց նպատակն է գուցէ՝ պարզապէս ճնշումն գործ դնելով նորերուստ տեղի ունեցող խառնակութիւնների վրայ, խաղաղացնել գրգռուած մտքերը: Եւ որպէս զի այս անգամ էլ ապարդիւն չանցնի աշխատանքը, զոհերը, պէտք է շարունակել կռիւը, որով միայն կարելի է դիպլոմատիային ստիպել ի նկատի առնել դժգոհ ժողովրդի պահանջները: Եւ երբ հայ ժողովուրդը ի նկատի առնել կը տայ իւր պահանջները, երբ մի քայլ առաջ կը գնայ՝ յեղափոխական գործունէութեան համար կը բացուի աւելի լայն ու նպաստաւոր ասպարէզ, աւելի պարարտ հող, և ձեռք բերելով մեծ ոյժ, գործունէութեան աւելի լայն շրջան, կարելի կը լինի աւելի յաջողութեամբ պսակել սուրբ իղձը—Տաճկահայաստանի ազատութիւնը հասնելով ժողովրդական-առաջադիմական կազմակերպութեան, յանուն որի Հայ Յեղ. Դաշնակցութիւնը գործում է այսօր:

Մենք վերստին դիմում ենք հայ ժողովրդին և օգնութեան հրաւեր կարդում: Ներկայ ըրպէն մեր դատի համար յաջող է. անհոգանալ դրանում, կը նշանակէ, դործել ամենամեծ պատմական սխալ և դաւաճանել տաճկահայ ժողովրդի դատին, անպատուել հազարաւոր մարտիրոսների յիշատակը. անհոգանալ ներկայ ըրպէում, կը նշանակէ, Տաճկահայաստանը և ժողովուրդը մատնել զոհ տալ իւր պոռնիկ լէշակեր իշխողին, հայրենիքը իւր ժողովրդի համար գերեզման շինել: Ազատութեան ճանապարհ հարթողը արեան հոսանքներն են. մենք չը պէտք է շրջանակներ սարսափելի տեսարաններից, մենք չպէտք է կորցնենք մեր պիտակցութիւնը հասկանալու ու տիրելու ըրպէին, նրան մեզ ծառայեցնելու: Աղէտի ու սուգի օրերում, եթէ լացը ու կոծը

Հասկանալի են, բայց պատմական բուսականում պահանջ-
 ւում է արիւթիւն, կամբի հաստատութիւն ու եռան-
 դի ոյժ յառաջ տանելու ազատութեան վսեմ, սուրբ
 գործը, մնալով միշտ բարձրութեան վրայ, լինելով միշտ
 պահանջան, հսկող իւր դատին:

Եւ այսօր, սուգի ու ողբի օրերում, որով համակ-
 ւած է ամբողջ Հայ ժողովուրդը, որովհետեւ անգութ
 թշնամին հազարաւոր զոհեր արաւ, հայրենիքը աւերակ
 դարձրեց, նրան իւր կաւակների արիւնով ողողեց, նա
 այդ սպաւոր ժողովուրդը վրէժխնդրական ոգով լրց-
 ւած, ինչպէս անացինք, միաժամանակ իւր բարձրու-
 թեան վրայ, դիտակցութեան մէջ մնալով, պիտի չննա-
 յի ոչ մի ոյժ՝ կուելու արիւթեամբ իւր ազատու-
 թեան համար, վրէժխնդիր լինելու թշնամուց, նրան
 պատժելու. թշնամին մահուան է դատապարտւած, իսկ
 դրա իրագործելը կախած է Հայ ժողովուրդից: Եւ Հայ
 ժողովուրդը այն ժամանակ կարող է պարծենալ, ճա-
 կատը բաց ու անշեղ հայեացքով նայել մարդկութեան,
 երբ նա կը պատժի ոճրագործին, մարդասպանին. իսկ
 եթէ նա անհոգ կը գտնուի, արժանի կը լինի զգանքի,
 ատելութեան ու արհամարանքի:

Ք Է Մ Ա Ռ Ի Ա Ի Ե Ր Ո Ւ Մ Ը

Մինչև ե՞րբ մենք այս դադաններուն ձեռքը գերի
 պիտի մնանք, մինչև ե՞րբ այս անօթի շուները մեր ա-
 լիւնը պիտի ծծեն ու վայրկեան մը մեզ հանգիստ պի-
 տի չտան: Օգոստոսի կուէն ի վեր մեր Քեմալի հայե-
 րուս մի՞ճակը անտանելի և անկարագրելի է. ոչ ցե-
 րեկ ունիւք, ոչ դիշոր, ոչ դադար. ի՞նչ ընելիքնիս մենք
 ալ չենք գիտեր:

Օգոստոսէն ի վեր մեր լեռները 600-1000-ի չափ
 քիւրդերով լեցած են, ամենքն ալ կառավարութեան
 Մարթին հրացաններով զինւած են: Քիւրդերը այս
 անգութութեան մէջ մղողը նոյն ինքն սուլթանի կառա-
 վարութիւնը և Գահիր փաշա ըսւած քիւրդ բէկն է:
 Ասոնք ամեն ինամք և աջակցութիւն չեն զանար այս
 վայրագ փաղան քիւրդերուն, որոնք 25-ական հոգիեց
 խմբեր կազմելով՝ մէկ մը այս գիւղին, մէկ մը այն գիւ-
 ղին վրայ կը յարձակին, կը կողոպտեն ու մզի անտա-
 նելի նեղութիւններ կուտան: Ալ մեզի ոչ կզէն կը, ոչ
 ոչխարէն ոչխար և ոչ ալ ուսուցիչէն ուսուցիչ չի-
 լուցին: Թող այս ինչքի, ստացւածքի վնասները, մեր

պատիւը ոտքի տակ առած են: Մեր կոյս աղջիկները,
 հարսները մեր աչքին առջև բռնաբարել՝ իրենց դա-
 զան կիրքը յագեցնելու համար, ասոնք պլլ ևս հա-
 սարակ բաներ կզած են: Մեր վանքերը, սրբաձայրերը,
 եկեղեցիները պլլ ևս քիւրդերու ձիրու համար արու-
 ներ են եղած:

Այս մէկ քանի օրուան մէջ սա գիւղերը կողոպտեցին.
 Հոգուս. Այս գիւղին բնակիչները բոլորովին բա-
 ցը մնացին. արջառ, ոչխար, ուսեւտ, ամենն ալ քիւր-
 դերը աւարի տէն. գիւղացիները մերկ ու անօթի կը
 չարչարուին:

Թավկըներ. Այս գիւղին վրայ 200 քիւրդ մէկէն կը
 յարձակին. գիւղացիները 6 ժամ անընդհատ դիմադրե-
 լէ, կուելէ յետոյ, 2 մարդ կը կորսնցնեն կուէն մէջ,
 որոց մին Ծածիկանց և միւս Ալթիկանց տունէն է: Իսկ
 քիւրդերը գիւղին 900 ոչխար կը քշեն, կը տանեն:

Աւերի Բագառիճ. Այս գիւղին հովիտներուն ձեռ-
 քերն ու ոտքերը կը կապեն և 1200 ոչխարը կը տա-
 նեն: Գիմադրութեան միջոցին 6 մարդ ևս կը կապեն
 կը տանեն, որոնց համար այժմ 150 ոսկի փրկանք կը
 պահանջեն, եթէ ոչ...

Աւերի Բագառիճ. Այս գիւղին 100 հատ կով և
 եղ կը տանեն. 2 մարդ ևս գերի: Այս գիւղին աջ-
 բիւրը գիւղէն դուրս կը գտնուի. գիւղացիները տանը
 դուէն դուրս չեն կրնար ելլել. վախ կայ, որ ամենքն
 ալ ծարաւէ մեռնին:

Մարեգ. Գիւղին մէջ գտնւած կենդանիներուն կէ-
 սը տարած են, յաջորդաբար միւսներն ալ. 4-5 տուն
 ամբողջովին կողոպտած են:

Հազարք. Դեռ յարձակում կրած չէ. իրիկան
 ժամը 10-էն վերջը դուէն դուրս ելլել կարելի չէ:
 Գիւղացիները ըստ կարելոյն զինւած... պարագ հրա-
 ցաններով, վառօդին օթան 80 դրուչ է, և ամ ալ
 չեն կրնար գտնել. Եւսէն, 10-ական հոգիով գի-
 ղը մինչև լոյս կը պահեն, գունէ յանկարծական յար-
 ձակում չի կրելու համար:

Առ այժմ ամեն գիւղացի տունէն դուրս չի կրնար
 ելլել: Գիւղէն քաղաք նամակ մը ղրկելու համար 3
 ոսկի վճարեցինք սպասաւոր քիւրդի մը: Ամեն մարդ
 որը բահը, որը կացինը ձեռքը առած դրան առջև կը
 հսկէ. բայց ի՞նչ օգուտ, քանի որ քիւրդերը սուլթա-
 նի շնորհած Մարտիներով զինւած են. մենք ի՞նչ կըր-
 նանք ընել անոնց: Կամայ կամայ ցուրաը սկսաւ, մեր
 երկրին ցուրուը արդէն յայտնի է, մենք վառելու փայտ
 մը անգամ չունինք մեր տուններուն մէջ. ի՞նչպէս բե-
 րինք լեռնէն, քանի որ ամեն գիւղ պաշարւած է քիւր-
 դերով:

Վախն ու սարսափը չափ չունի. քիւրդերը յայտնի համարձակ կըսեն. «որ որ հայու գիւղ մը կայ, ամենքն ալ պիտի ոչնչացնենք. և աշխարհիս վրայէն հայ անունը պիտի վերցնենք. մեզի այսպէս պատւիրւած է»: Դեռ խստութիւնը այս աստիճանին չի հասած՝ Դահիր փաշային գացինք աղաչելու, այն շունին, որուն ոսկորներն ու ծուծերը մեր քրտինքով շաղախւած են: «Տէ՛Ք օրուն կիտին, պաշտնըզն շարեսինէ պապըն, պուրասը Թուրքիա օլսա, էրմէնիստան տէ օլսա, պէն կինէ Դահիր փաշա ըմ» (կորուեցէք, գացէք, ձեր գլխուն ձախը նայեցէք. հոս Թուրքիա ալ ըլլայ, Հայաստան ալ ըլլայ՝ ես դարձեալ Դահիր փաշա եմ): Կառավարութեան դիմեցինք, իբրև պատասխան... «պիղտէ գօրքարը քիւրդէրտէն», (մենք ալ կը վախնանք քիւրդերէն): Կառավարութիւն մը՝ որ իր հպատակէն կը վախնայ... մինչդեռ շնութիւն է: քանի որ քիւրդերը մեր գիւղերը գալու համար, Եփրատի միւս եզերքէն, միայն մէկ ձամբայ մը ունին և այդ ձամբան ալ Քէմալի կառավարական դրան առջևէն կանցնի, և այնպիսի նեղ անցք մըն է, որ եթէ ուզէ, ձանձ մը անգամ չի կըրնար անցնել:

Հայ եղբայրներ, ահա կը տեսնէք, որ Թուրքը, քիւրդը իրարու հետ միացած՝ յայտնի համարձակ մեզ կը կողոպտեն, մեզ կանպատեն ու մեզ օրէ օր կ'ոչնչացնեն. ուրիշ ազգեր կը լսեն, կը տեսնեն ու չի տեսնելու կը զարնեն, մի՞թէ դուք ալ ձեր ականջները պիտի գոցէք մեր այս աղաչանքներուն առջև ու անտարբեր աչքով պիտի նայիք մեր վրայ: Մինչև երբ պիտի չի դիմաք մեզի:

Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն Ի Զ Ա Ր Դ Ը

Սկիզբը նաւերու երթևեկութեանց դադարման պատճառով, վերջն ալ զանազան պայմաններով կաշկանդւած գրութեամբ՝ անկարելի եղաւ ինձ շուտով տեղեկութիւններ հասցնել և ծանօթացնել ձեզ մեր վիճակին:

Ես՝ ականատես Տրապիզոնի կոտորածին, կաշխատեմ նկարագրել ձեզ զայն մանրամասն, առանց իրականէն շեղելու, որչափ իմ թոյլ գրիչս ինձ թոյլ կը տայ:

Վանայ հարստահարիչ Բահրի փաշային և Տրապիզոնի զինւորական հրամանատարին դաշնակցական երկու ահաբեկիչներու ձեռամբ վերաւորելէն յետոյ, Թուրքերը գրգռուած յարձակեցան հայոց թաղերու վրայ:

Յարձակումը սկսաւ գիշերւայ ժամը 4-ին (ըստ Թրքքաց) և տեւեց մինչև լոյս: Հայերը իրենց տուներու մէջ ամրացած, յամառ դիմադրութեամբ մը յաջողեցան պաշտպանել. իսկ Թուրքերու կողմէ եղան 7-8 հատի մը չափ վիրաւորւածներ: Կառավարութիւնը այդ ժամանակ քնած չէր. Ալայ բէյին, պօլիս կօմիսէրը և դեռ ուրիշ պաշտօնեաներ, շքրջապատուած զօրքերու ջոկ ջոկ խմբերով, կը յորդորէին մոլեգնած ամբոխը յետ քաշելի նպատակէն, ըսելով՝ «դեռ ժամանակը չէ, ըսպասեցէք, և...»:

Այն ինչ զինւորականներու մէկ մասը զբաղւած էր Թուրք խուժանը խաղաղացնելով, անդին ուրիշ մաս մը ալ ահաբեկիչներու ետևէն ինկած, կը մտնէր պատահած տունը, խուզարկութիւններ կը կատարէր, և ամեն անտեղի մնասներ, հայհոյութիւններով բարբխաւունւած, չէր զլանար թափել անմեղ խուզարկւածներու գլխուն: Մեր տունն ալ մտան և ամեն ծակ ու ծուկ մանրացնին պրպտելէ յետոյ, ու անկողնի տակը փնտռեցին չքիտեմ ինչ...:

Ահաբեկիչները փնտռել առարկելով, շատ տուներ խուզարկեցին և գրաւեցին բոլոր գտնւած զէնքերը:

Յաջորդ առաւօտը Թուրքերու երևոյթը նախընթաց օրւանին բոլորովին հակապատկերը կը ներկայացնէր. մոռացութեան տւած էին ամեն ինչ և կարծես որոշած էին հայերու հետ սիրով, իբրև եղբօր հետ, վարելի, անոնց մազին իսկ չըպչել:

Բայց յայտնի ու շատ որոշ կերևար, որ այդ հանգրստացումը կեղծ էր, խարուսիկ և զգացմանց բունի զգալումը պիտի պայթէր վերջապէս սոսկալի բունկումով մը:

Հայերը կամրանային խմբերով հաստատուն տներու մէջ և որոշեր էին՝ պաշտպանել մինչև իրենց վերջին շունչը:

Թուրքերը հրապարակի վրայ գտնւած բոլոր զէնքերը կը գնէին, և դեռ պակասը լրացնելու համար պահականցներու մէջ միտերւած զէնքերու պաշարին կը դիմէին, անդին կառավարութիւնը այդ բոլորը անտես առնելով, ազգարարութիւններ կը ցրէր, մունետիկներ կը պտտցնէր, հարուստներու մասնաւոր պաշտօնեաներ կողարկէր, ու կաշխատէր բոլորին վստահութիւն ներշնչել, ըսելով՝ «հանգստացէք, բան չկայ, ամեն երկիւղ փարատած է, բացէք ձեր խանութները ու շուտով գործի ձեռնարկեցէք»:

Եղան ոմանք, որ անսալով կառավարութեան սարքած բոլոր այդ խաբեհայութիւններուն, դուրս եկան և սկսան աշխատութեամբ պարապել:

Կառավարութեան պաշտօնեաներ և նոյն իսկ բաշի-

բողոկներ կը կանգնեցնէին պատահած հայը փողոցներու մէջ և կը գրաւէին քովը դանակը դանակը կամ ուժովը, ըսելով՝ թէ «յանկարծ երկու» բորբոքածներու ընդհարումը կարող է ընդհանուր շփոթութեան պատճառ դառնալ, տէք ձեր զէնքերը, մենք ի հարկին կը պաշտպանենք զձեզ»:

Սեպտեմբերի 25-ին, երկուշաբթի օրը, փօշիս մը և թուրք միջտար մը, ընկերակցութեամբ Սիւրմէնէէն հասած զօրքերու, թրքախառն հայ թաղերու տներու իւրաքանչիւրին վրայ կարմիր նշաններ կը դնէին...

Այդ նոյն օրը, կուսակալը (Գաթրի պէյ) կը հրահրէ իր մօտ հայոց Ազգային Քաղաքական ժողովը, և իր մաղձը ամբողջ անոր գլխուն թափելէ յետոյ, կը պահանջէ, որ շուտով ահաբեկիչները իրեն յանձնին, սպառնալով, որ հակառակ պարագային անկարող է երաշխաւորել անոնց ապահովութիւնը...

Սա, ժողով կայացնելէ յետոյ, Սեպտեմբերի 26-ի առաւօտը միայն յատուկ տեղեկագրով մը կը պատասխանէ կուսակալին՝ թէ ինքը անկարող է կառավարութեան չգտածները գտնել, և թէ ամեն օժանդակութիւն պատրաստ է ընծայել անոր չարագործները գրտնելու աշխատութեան մէջ:

Բայց, այսպէս կամ այնպէս, վճռուած էր սակայն տրապիզոնցիներուն բազը:

Սեպտեմբեր 26-ին սկսաւ ամեն կողմէ հեղեղի նման հոսել հայու արիւնը:

Ջօրքերը, ըստ առաջնոյն, որպէս կարգ պահպանելու համար, ցրած էին քաղաքի մէջ զանազան կետերու վրայ. ժամը 5 ու քառորդին փողը կը հնչէ և զօրքերը միացած պաշտպաններու խառնաձիղանձի հետ, կսկսին յառաջ խաղալ չորս գլխաւոր կողմերէ և դանազան ուղղութիւններով: Մէկ մասը ուղիղ նաւահանգստի վրան գտնուած զօրանոցէն դուրս կը գայ, մէկ մասը քաղաքի արևելեան կողմէն, Տէյէրմէն-տէրէ կողմէն արուարձաններու բահականոցներէն, միւս մասը՝ քաղաքին հարաւային կողմէն, Պող-թէփէի բլրէն, իսկ ումանք ալ արևմտեան կողմը գտնուած միջնաբերդէն և ուրիշ մի քանի կետերէ կը յարձակին ուղիղ շուկաներու վրայ:

Այդ օրը, թուրք արհեստաւորն ալ զէնքը միասին խանութ տարած լինելով, փողը հնչած ըրպէս հենց, կը գոցէ իւր խանութները և կսկսի իւր առանձին դերը աւերիչ հոսանքին մէջ:

Յոյն տղայ մը, որ պատահամբ թիւրքերու ձեռքն ինկած և հետեւած էր ոստիկանատան մէջ, կըսէր՝ թէ ինչպէս դուրսը կուսակալը կը հրահանգէր զօրքերը, և խրոխտ հրամաններով կիրաւորներ հայերու համար

պատրաստուած սոսկալի դաւադրութիւնը:

Առաջին ըրպէսին գնդակահար կընէին պատահած հայուն:

Յօյները և օտար դաւանութիւններու պատկանող հայերը զերծ կը մնան կոտորածէ: Արպէս զի հայը լաւ ջոկէին և չշփոթէին յոյնի կամ ուրիշի հետ, երկար ժամանակէ ի վեր լրտեսութիւնը իրենց բան ու գործըրած, ամբողջ հայ ազգաբնակչութեան քաջ ծանօթ թուրքեր տառջնորդ կարգուած էին խմբերու, որոնք և իւրաքանչիւր սպանուածի վրայ մատնանիշ կընէին՝ «վնուրն, էրմէնի տըր» (զարիէք, հայ է) պոռալով: Ցաւ ի սիրտ պարտաւոր ենք սակայն յայտնել, որ վերջիններուս հետ կը տեսնուէին երբեմն և յոյներ:

Հրապարակի վրայ գտնուած հայերը յանկարծակիի եկած և գրեթէ անզէն, առանց իսկ ժամանակ գտնելու խանութներն դոցելու, դիւահարի նման կսկսին այս ու այն կողմ փախչիլ, ու ապաստան փնտռել հոս կամ հոն: Բայց դժբաղդաբար շատ քիչերու կը յաջողի ազատել ինքզինքնին: Շատեր ֆուրերներու ուսումնարանի ընդարձակ շէնքին մէջ կապաստանին, այլք՝ եկեղեցիներու և զանազան հիւպատոսարաններու մէջ: Չի կարելի մոռնալ յոյներու ոմանց ցոյց տուած մարդասէր կարեկցութիւնն ու պաշտպանութիւնը. սակայն չէ կարելի մոռնալ և այն, որ գտնուեցան ոմանք ալ, որոնք զլանալով պաշտպանութիւն տալ մատնեցին նոյն իսկ պահածներու տեղերը:

Մենք մեր տան պատուհաններէն մէկէն չաւն կսխտելով, իջանք յոյնի մը պարտեղը: Հոն գտնուած 23-24 տարեկան յոյն երիտասարդը, վախենալով, որ իբրև հայերու պաշտպանութիւն տուողի, վնասի, ուզեց դուրս գալ ու մեզ թրքաց ձեռքը մատնել բայց մենք, ուժովը անոր կրծքին դրած, պահեցինք զայն իւր տանը մինչև կոտորածի վախճանը:

Հրացաններու անբնդհատ ձայնը, զօրքերու ու խառնաձիղանձի աղաղակները, վիրաւորածներու, կանանց և երիտասարդներու լացը, ձիջը ու վայնասունը, կատարեալ սոսկում կազդէին կենդանի մնացողներու վրայ, այնպէս՝ որ մարդ պահ մը ինքզինքը դժոխք փոխադրած կը կարծէր, սաղայէններու ձեռքի մէջ:

Հայերու ոմանց ուժովներու դործածութիւնը շատ անգամ ապարդիւն կանցներ, մինչդեռ թրքաց հրացաններէ արձակուած ամեն մի գնդակ կը ծակէր շեշտակի հայու կուրծքը:

Բարեբաղդաբար (°) շատեր թալանի, կողոպուտի ետեւէ ինկած, անդիտակցարար թոյլ կը տային ոմանց փախչիլ ու ազատիլ:

Ջօրքերուն բաժանուած էր յատուկ երկաթէ ձողեր

և գործիքներ, որոնցմով կը խորտակէին խանութներու երկաթ դռները ու կը փշռէին ամուր գրամարկղները:

Մոսկովի խանութներու գրամարկղը պարպելէ յետոյ կը կտրտեն նաև ամբողջ տոմարները: Խեղճը այժմ 10 դուրուշ մէկէն, 20 միւսէն մուրալով՝ իւր և ընտանիքի օրպապահիկը կը ճարէ:

Այլ բէյը ձիու վրայ նստած տուն կը փոխադրէր կողոպտած ոսկիները:

Հայ խանութները գրեթէ ամբողջ թալանւած են. Սիւրմէնի ափերը միայն դուրս եկան 20-25 նաւակներ, բեռնաւորւած ամեն կարգի հարստութիւններով:

Վոդուպուր տեւց մինչև յաջորդ առաւօտը: Գիշերուայ խոր լուսութեան մէջ, կոտորածէ զերծ մնացած հայերու սիրտն ալ կը խոցոտէր՝ ամեն կողմէ լսելով խուլ շարժումը, դռներու, փեղկերու խորտակումը և մուրձերու հարածի ներքև անգլխահան գրամարկղներու արձակած անկոնկոցը...

Իսկ կոտորածը, 3-4 ժամայ միօրինակ տևողութենէ մը յետոյ, դարբեցաւ ի վերջոյ ցանցառ հրացանաձուլութեամբ միմիայն գիշերուայ ժամը երկուքին:

Վոտորածի յաջորդ օրը, Սեպտեմբերի 27-ին, սկսան ձերբակալել բոլոր մնացած հայերը, իբրև ապստամբութենէ վերջը անձնատուր եղածներու: Ողորմելի՛ կառավարութիւն. լոյսի նման ճշմարտութիւնը կաշխատի ծածկել, որպէս զի ազատի ծանր պատասխանատուութենէն, կուզէ ցոյց տալ եւրոպացիներու, թէ հայերը ապստամբեցան և ես զանոնք ընկճելու համար միայն ստիպուած, դիմեցի զինուորական ոյժի:

Ձերբակալւածներով լեցւած են կառավարութեան շէնքի բանտային մասի բոլոր սենեակները. լեցւած է նաև գաւիթը: Եւ դեռ չբաւարարուի այդ ամենը, բանտի վերածուցան անգապատկան մի մեծ շէնք և մի խան:

Բանտարկւածները կը դատուին նորակազմ զինուորական ատենի կողմէ:

Արսեն, շրթայւածներէ 15 հոգի հրացանի կը բռնեն:

Վոտորածի միւս օրը դարձեալ, հարիւրաւոր անմեղներու թափուած արիւնով չկշտացած, յարձակեցան կառավարութեան շէնքի գաւթին մէջ գտնուած կալանաւորներու վրայ, և ուզեցին սպանել զանոնք. սակայն զինուորներու շրթաները յետ մղեցին՝ յարձակողներին:

Ինչպէս լաւ կարող է բաւականանալ երբեմն զինուորական ոյժը խափանելու խուժանի յարձակումները...

—Տրպալիզոնի շրջակայ 30-32 հայաբնակ գիւղերու մէջ ալ նմանը չտեսնուած բարբարոսութիւններ գործուեցան. այրեցան ու հիմնայատակ եղան շատ տներ:

Սիւրմէնի և դիւղերու հայերը սպանուեցան ամբողջովին, առանց խորութեան սեռի կամ հասակի:

Առ այժմ սպանուածներու թիւը ճիշտ չէ կարելի որոշել. ենթադրութեամբ միայն 1000-1500 կարելի է ըսել:

* * *


Մի քանի պատկերներ իմ գիտցածներէն.

1. Տէյրմէն-տէրէ-ի մէջ թուրք հարիւրապետի մը բարբարոսութեանը զոհ գնաց Տիրատուրեան եղբայրներէն Միսակը: Հարիւրապետը զրկած էր յատուկ զայն սպանելու համար իւր ախլարի գործարանին մէջ: Խեղճը երբէք չէր կարող երևակայել ապերսխտութիւն այն մարդուն կողմէ, որ պահ մը առաջ դեռ իւր հետ ճոխ սեղանի մը մասնակցութիւնը կը վայելէր:

2. Հեռուէն գնդակահար ըրին մսագործ Աբամը իւր տղուն Գարեգինի հետ իրենց խանութին մէջ յետոյ յարձակելով վիրաւորեալներու վրայ, սկսան անդամահատ ընել զանոնք գաղանաբար. թև, գլուխ, սրունք և այլն մասեր կախելով երկաթէ կեռերէ, իբրև մտի սկսան ծախել անցորդներուն պոռալով՝ յինչ կը ուզէք. թև, սրունք, ուսք, գլուխ, առէք աժան աժան:

3. Ար յարձակին Յովհաննէս Աւագեանի տան վրայ, կը խորտակեն դուռը ու կը խուժեն ներս: Յովհաննէսը, երբ տարեկան տղեկը ձեռքը, անոր կինը, շրջապատած իրենց որդոցմով, կիյնան գազաններու ոտքը, լալով ողբալով կառաջարկեն անոնց տանել իրենց բոլոր հարստութիւնը, միայն խնայէին իրենց կեանքին: Անօդուտ, անողորմները կսպանեն նախ տղեկը հօրը բազկացը մէջ, յետոյ ալ կը մորթեն զինքը կնոջը ոտքին տակ:

4. Վոտորածը սկսելէն քիչ առաջ, 30 հոգիէ բաղկացած վանեցիներու խումբ մը անցափր ձեռք բերելու պահանջով կը գտնուէր կառավարութեան դուռը: Վոտորածի նշանէն անմիջապէս առաջ թուրք պաշտօնեաները դուրս կը վախտեն զանոնք կառավարութեանէն, ուրիշ և քսան քայլ հեռու կսպանուին անխնայ, առանց բացառութեան:



Ի Ա Շ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն
Հ Ա Յ Դ Ո Ւ Կ Ա Յ Ի Ն Խ Մ Բ Ի Կ Ի Ի Ի Ը
Ք Ե Օ Բ Բ Ի Ք Է Օ Յ Ո Ւ Մ

Քեօբրի-Քէյոյի՝ ընկած լինելով Լազիստանի և Էրզրումի ճանապարհի վրայ, միշտ ենթակայ էր լազեցի,

մանաւանդ մաքսախոյզ լազերի յարձակմանց. քանիցս այդ գիւղը թալանել է և կանայք ու օրիորդներ բըռնաբարել:

Դաշնակցութեան հայրուկային խումբը, Գրիգոր Տէր Մկրտչեանի առաջնորդութեամբ, այդ կողմերումն էր պտտում: Հայրուկային խումբը լուր առնելով, որ մի խումբ լազեր՝ 50 հոգուց բաղկացած, յարձակելու են գիւղի վրայ, օգնութեան է հասնում՝ գիւղը պաշտպանելու: Մուծը արդէն կոխել էր. լազերը յարձակում են գիւղի վրայ զանազան կողմերից. սկսում է հրացանաձգութիւնը:

Մեր խումբը դիմադրում էր այն ջոկատին, որ ղեկավարում էր լազերի խմբապետ Ահմէտ Օմէրը: Երբ խմբերը բաւականին մտնեւում են մէկ մէկու, Գրիգորը նետում է թշնամու խմբի մէջ ու մի գնդակի հարածով գետին գլորում Օմէրին, բղաւելով՝ «անպիտաններ, միշտ սովոր էք հային անզէն գտնելով՝ մորթել ոչխարի նման, միշտ պէտք է մեզնից արիւն հօսի, գետին փռելի» և խումբ նրանից Մարտինի հրացանը: Բայց, հենց այդ րոպէին, Օմէրի ընկերները կրոնակից խփում են Գրիգորին: Գրիգորը առաջին անգամից չի ընկնում. երկու հրացանները խտտած առաջ է անցնում և հազիւ 10 քայլ արած, ընկնում է կրթքին սեղմած պահելով թէ իւր և թէ լազի հրացանը:

Կռիւր սաստկանում է. մեր հայրուկային խումբը կատաղած այդ տեսարանից, կարկտի պէս թափում է գնդակները թշնամու վրայ և յետ մղում, փախցնում գիւղից. մերոնք հետևում են. կռիւր շարունակում է գիւղից դուրս էլ: Գիւղացիք, որ խմբի օգնութեան էին դուրս եկել սկզբում, քիչ յետոյ մտնում են իրենց աները: Գիշերային մթութիւնը վերջ է դնում կռիւն:

Գիշեր ժամանակ լազերը նորից մտնում են գիւղին իրենց լէշերը վերցնելու, որոնց զէնքերը հայերը վերցնելով՝ դիակները թողել էին ընկած տեղը: Հայրուկները թէև ուշ բայց նկատում են այդ և նորից երկուսին գետին են փռում: Հազիւ լազերին յաջողում է վերցնել իրենց վերաւոր խմբապետին և փախչել ու ապաստանել Պատիրւան գիւղը, տաճիկ գիւղապետի մօտ, որտեղ և Օմէր աւազակը մեռնում է Գրիգորից ստացած գնդակից:

Այդ դէպքից յետոյ, թէ տեղացի մահմետականները, թէ նոյն իսկ սուլթանի զինուորները սարսափում են այդ գիւղից և քեօբրի-քեօրցիներին ակնածութեամբ են վերաբերում: Այժմ հազիւ է պատահում, որ 2-3 զայթիա այդ տեղ գիշերեն և եթէ գիշերում էլ են երկիւղից իրենց մարդավարի են պահում: Ժողովրդական առածը ասում է՝ «թուրքի հետ բարեկամ լինել»:

լու համար, հարկաւոր է նրան ծեծել...»

Բասնը այսօր կարող է թէ իրեն պաշտպանել և թէ կուել. նրան միջոց է դրած...

ՆՆԻՐԱՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅՈՒՅԱԿ

Հ. Յեղ. Դաշնակց. կենտր. սնդուկի մէջ ստացւեցան.

Ռ. ք-ից Թ. միջոցով 22 պատր., 2466 առ. փամփ. և 3 մք.: Ռ. ք-ից Զ. միջոցով 21 առքձ., 2430 հր. փ.: Ոսկանապատ 1000 րոնքի, Արամից 200 ր., Փշ. ք-ից 30 ր., Թ. վաճառակ. խմբ-ից 100 ր., Ապառաժից 500 ր., Ռաֆայէլից 200 ր., Եւպ-ից 5. Մ-ից 100 ր.: Վիշապ քաղաքի Կեդրոնական սնդուկին մէջ ստացւեցան.

Պարոյր 55 դհ., Կեռաս 10 դհ., Ասպարէզ 20 դհ., Սեւարմիր 47 ու կէս դհ., Ուսումնասէր քոյր 30 դհ., Եփրատ 108 դհ., Դրախտ 10 դհ., Չամիպէլ 20 դհ., Անանուն 25 դհ., Յօժար 25 դհ., Մեղրիկ 76 դհ.:

Օձ քաղաքէն. Օրացոյց 108 դհ., Բագրատ 540 դհ., Գուրգէն 1080 դհ., Գայլ 5 դհ., Ոմն 6 դհ., Թնդանթ 30 դհ., ներշապուհ 1080 դհ., Քարակոփ 1080 դհ., Որբէպրի 50 օսմ. ոսկի և 250 մէքիտ., Շանթ 35 դհ., Հուր 1 մարթինի հրացան և 9 փամիուշու:

Սար դիւղէն՝ Ղարդ. 50 դհ., Յոյս. 20 դհ., Արամ 20 դհ., Հրացանից 27 դհ., Կարիք խմբից 150 դհ., Ս. Կ. 20 դհ., Մ. Ս. 20 դհ., Ե. Բ. 20 դհ., Գ. Ե. 15 դհ., Մ. ք. Կ. 20 դհ., Ս. Հ. 20 դհ., Կ. Ն. 40 դհ., Մ. Ն. Բ. 25 դհ., Մ. Ն. 10 դհ., Մ. Բ. 10 դհ. Հայրենասէր խումբ 200 դհ., Ն. Սուր 540 դհ., Մ. Մշ. 540 դահեկան:

Արշակաւան քաղ. կեդր. սնդուկի մէջ ստացւեցան:

Արտաւազդեան խմբ. 355 դհ., Խոսրովեան խ. 35 դհ., Պիծակ խ. 40 դհ., Շաքէ 134 դհ., Ծառ 20 դհ., Սեդրակ 20 դհ., Պետրոս 10 դհ., Ազատական խ. 70 դհ.:

Սարմատ. Եղ. Ս. Ա. 350 ղուան:

Ռուսիայի Տ. քաղ. «Դաշնակցական Բանուր խմբից» ստացւեց 327 Ֆրանք, Ռուսիայի Ո. քաղ. «Դաշնակցական Հրացան խմբից» 173 Ֆր.:

Բեւր. Անվեր քաղ-ից Մ. Սար. 200 Ֆր.

Շվ. Ժ. ք. օր. Խ. 80 Ֆրանկ:

Իտ. Ս.-Բ. ք-ից Ա. 10 Ֆրանկ:

Թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, ստիպւած ենք մեր նոր հասցէն դարձնել «ԱՐՄԵՆ-ԳԱՍՊԱՐ», որի վրայ հրահրում ենք առանձին ուշադրութիւն:

Դաշնակցութեան անձնութեանց խնդրում է թղթանցութեան ներատուութեան համար դիմել:

Armene-Gaspar, poste restante, Carouge (Suisse)

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ սուպարան: